

K'mayk'i çağikner :
Zowart'

grak.\0554\0574\0561\0
575\0584\056b
\056e\0561\0572\056b\0
56f\0576\0565\0580 :
[...]

Alpiar, Haroutioun (1864-1919). K'mayk'i çagikner : Zowart' grak.\0554\0574\0561\0575\0584\056b \056e\0561\0572\056b\056f\0576\0565\0580 :
\0536\0578\0582\0561\0580\0569 \0563\0580\0561\056f.. 1917.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

ՉՈՒԱՐԹ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՂԵ

Յ. ԱԼՓԻԱՐ



Ք Մ Ա Յ Ք Ի ←

→ Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր

Հնրեցողներուս

Cette œuvre aux grâces un peu mièvres
Prendra de la grandeur en passant par vos lèvres.

Միկէլ Զարևաֆոյիս



1917

Կ. ՊՈՒԻՍ


Տպագր. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ՆԻ ՈՐԴԻՔ

Պատր Այի հասկսի քիւ 73

84

NW 57 44036 55

ՀՈՒԱՐԹ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



Յ. ԱԼՓԻԱՐ



ՔՄԱՅՔԻ Է

ԾԱՂԻԿՆԵՐ



ԸՆԹԵՐԳՈՒՆԵՐԱՍ՝

Cette œuvre aux grâces un peu mièvres
Prendra de la grandeur en passant par vos lèvres.

Միկել Զանբաֆոյիս




1917

Ե. ԳՈՒԻՍ

Տպգր. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՔ

Պատր Ալի Գասսնսի, քիւ 75



D4 mag

2008 - 155525

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Իմ այս ամասնագիտի վիճակիս վեց երրորդ անգամն է որ կարող եղայ այս հաստրս աշ յօրհնելոյն :

Գրեշ գիտնալը եւ կարեւնալը՝ անյուսմելի հիշանդոքիսն վրն է, որով փարսկեալները ոչ կամ կանուխ կը գղջան գրագիտ ծնած շղատնան :

Այս վերջիներէն եւ՛ եւ աշ : Ինծի դեմ շատ բաներ շտաած են, բայց ասունց վեց ամենէն շատ կրկնուածը սա է թէ գրածներուս վեց ասեայ կը գործածեմ Գրանիւտրին եւ կամ ուրիշ օտար շեզուէ բաներ եւ պարբերութիւններ, ինչ որ ցոյց կուտայ թէ՛ ամենէն քիչ գիտցածս մայրենի շեզուն է :

Եւ որովհետեւ ներկայ գործիս վեց աշ գերծ լեւ՛ վնացած այդ թերութենէն եւ իմասնալոյ՛ որ՛ մի գուցէ գիտ նորէն յանդամեն իմ հակառակորդներս եւ ինձնէն անխանձողները, խոստովանալար կը յայտարարեմ թէ՛ եւ միշտ եկնադրած եմ որ գրածներս կարդացողները, ինձնէ շատ անշի բանցիտ են :

Եւ հոգս անգամ լեւ՛ յրած, եթէ խրատները եւ քիթքիտուսները գիտ լեն կարդար եւ գրածներուս լեն հաւնիր : Սկիզբէն ի վեր եւ միշտ ջանադիր եղած եմ մեր ազգին select մասին գրագիտը շղատնա :



ՄԱՐՍԷԼ ԲՐԷՎՕ


Մարսէլ Բրէվոյի գրածներուն սիրահար մը ըլլալուն համար է որ անոր վերջին գործին՝ Féminitésէն թարգմանաբար այս հասարիս մէջ կ'ամփոփեմ այդ գիրքէն քանի մը հասուածներ, որոնք ինձի հետ ընթերցողներուն ալ զմայլանքը պիտի գրաւեն:

Մարսէլ Բրէվօ այնքան կորովի բարոյաբան գրադէտ մըն է որ, շատ անգամ մերօրեայ բարքերուն վրայ ըրած խորին դժնութիւններուն արդիւնքը յատկանշելու համար նոր բառեր դարբնած է, ինչպէս նաեւ տիպարներ, ինքք հեղինակն է նոր ասացուածքներուն և նոյն իսկ իր երկասիրութիւններուն ա՛նուները՝ սկսելով Կես-Կոյսերէն (Demie-Vierges) մինչև Պահապան հերշտակները (Angees gardiens) սքանչելի գիւտերէն և որ անագին յաջողութիւն գտած են ո՛չ միայն Գրանտայի, այլ նոյն իսկ դրական օտար աշխարհներուն մէջ: Մեր այժմու բարքերուն վրայ գրուած ուսումնասիրութիւններ են ամէնքն ալ նուրբ և կախարդիչ ոճով մը:

Féminitésն իր հրատարակած վերջին հատորն է: Անկէ հաս թարգմանած հասուածները իբրև նմայշ կրնան ծառայել այդ հատորին գերազանցութեան եւ գեղեցկութեան:



ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՕԳՏՈՒՈՂՆԵՐԸ



Ա.

Ս Ի Ս Ե Ռ Ը

Պատերազմէն ամենէն շատ օգտուողներուն մէջ շարքովն
եւրոպայի անմիջապէս կուգայ ուրբանի, դուքիի սիսեռը՝ սովո-
րական լեզուով նօհուքը, որ աշխարհուէր այս կոխէն առաջ,
խեղճ ու կրակ աղբառին ուսուցիչն էր միայն, բայց հիմա՛
չնորհիւ անհամար ճակատներուն վրայ մզուած աննկարագ-
րելի կոխներուն, անիկա հարուստին ալ ուսուցիչը եղաւ։
Եւ ասիկա շատ բնական կը թուի ինձի, անոր համար որ ձեր
չի համարձ ալ սիսեռը խիստ սերտ յարաբերութիւն ունի
պատերազմին հետ, այս պատերազմին հետ, մանաւանդ որ
սպառնալից թէ՛ քան դարերու յարաբերութիւնը
բանի մը չէ ծառայած։ Երեք տարիներէ ի վեր մեր խնամ
սեւ ջուրին մէջ աւելի մեծ տեղ ունի սիսեռը քան թէ սուր-
ճը։ Եւ այս յաւելչութեն ամենէն շատ առժողը եւ կամ, ու-
րախեալաւ, սուրճը այն է ուղեղիս համար, ինչ որ է շուրջին
մեքենաներուն։ Ասանց մեղանի դուրէ կարեւոր գրեց— մա-
տիար օղջ ըլլայ, — բայց սուանց սուրճի գրիչն ձեռք չիմ
տաներ։ Ուրիշներ շատ կան որ իրենց ամէն տեսակ յաջո-
ղութիւնները օգիւն կը պարտին, զինեմաներն են ասանք,
բայց եթէ կրցած կամ անարժանաբար պղտիկ անուն մը չինել
ինձի, հայ օգործուկ գրականութեան մէջ, այդ բազմն ալ եւ
կը պարտիմ — ինչո՛ւ պահեմ — սուրճին՝ որ բնկերակցու-
թեամբ մշտապա ակառկիս, իմ երկու կարողացոյն եւ պատ-
ուական աշխատակիցներս եղած են այն օրէն ի վեր որ գրելը

խմ տկար կողմն և մարեակա եղած է : Առանց սուրճի և ծխա-
խոտի չպիտի կրնայի ըլլալ այն քիչը՝ որ եմ : Երախտագի-
տական այս անշուք և համեատ պարտականութիւնս կատա-
րելէ ետքը կ'անցնիմ մտադրած նիւթիս՝ որ է սիսեռը, որ
par procuration, սուրճին պաշտօնը կատարելու վրայ է դնել :

Եթէ ատեն մը ևս այս ահուելի պատերազմը շարունակ-
ուելու ըլլայ, պատերազմ մը՝ որմէ աւելի աղէտաբեր բան մը
չէ տեսնուած դարերէ ի վեր : Այո՛, կ'ըսեմ, եթէ Աստուած
մի՛ արտայէ, դեռ ատեն մը ևս տեւէ ներկայ կայութիւնը,
պիտի դայ օր մը, որ շատ հեռու չի թուիր ինձի, այլևս
հարկ պիտի ըլլայ որ մեր լեզուին բառարանները սրբագրելու
ձեռնարկենք, անոնց մէջ դանուած սուրճ բառին տեղ սիսեռ
դնելու համար : Այս տեղերը որ մինչև հիմա սրճարան ա-
նուամբ ծանօթ էին մեզի, այսուհետեւ պիտի անուանուին
սիսեռասրան :

Այլևս Բերայի մէջ չպիտի տեսնենք Café Royal, Café
Riche, Café de la Paix անուամբ գրաստեղիներ : Անոնց պի-
տի յաջորդեն Pois-Chiche de la Paix անուն ունեցող կրթ-
պակներ :

Մեզի եկող հիւրերուն խահուէ հրամայել չի կայ այսու-
հետեւ, այլ պարզապէս դատարթ մը հօհուս :

Երկաթի, քարի, պողպտաի դարերէն ետքը, սիսեռի
դարը :



Առանց սուրճի կեանքը սոսնց բոյրի վարդի կր նմանի,
դո՛ւն, ինձի համար, ինձի որ կեանքս համակ invétéré սրճա-
մոլ օր եղած եմ, փոխանակ գինեւոյ մը ըլլալու :


Ախտահին այս յաղթապանձ բարձրացումը շատ չպիտի հե-
տաքրքրէր զիս, եթէ այդ յուսիքով մը պատճառ եղած չըլլար
որ խմ ամենատիրելի կողակիցս, Տիկին Ալիիար որ բոլոր կա-
նայի սուրբինութիւններու և անսահման անձնութիւն
մարմնացումն է, վերջերս փոխած չըլլար իր պաշտելի նկարա-
գիրը և ստախօսութիւնն անձնատուր եղած չըլլար : Երբէք

չէր պատահած որ իր բերնէն սուտ մը իմացած ըլլայի . Բայց հիմայ , խեղճ կիներ անգիտակցաբար օրը քանի մը անգամ սուտ կը զրուցէ ակամայ , ըստ օրուան նորայթին :

Օրուան միջ գոնէ երկու կամ երեք անգամ , որոշեալ ժամերուն , հա ինծի կը հարցնէ իր աղու ձայնով .

Սահուէ կ'ուզե՞ս :

Եւ պահ մը հաքը ինծի օրուած պղտիկ դաւաթով տաք հեղուկին մէջ սուրճի կասկածն անգամ չի կայ , ընդ հակառակ կը սիսեռն է որ անոր մէջ կը տիրապետէ :



Բ.

ՔԱՐԻՒՂԸ

Մէկ թիթեղը հազար վեց հարիւր և յիսուն դրուշ . . .

Այս գնով շատ քիչերու տրուած է կարենալ ըսել «Fiallux», երբ մուխը կոխէ :

Քարիւղը իր աքօթօզը բաշտելու վրայ է :

Այդ գարշահոտ հեղուկը որ բազղը շինած է Բոքֆելներու , նօպէլներու պէս քանի մը հոպիներու , պիտի համնէր ուրեմն այսօրուան փառքի գազաթնակէտին , անմատչելի նիւթ մը պիտի ըլլար և պիտի ծախուէր Guérinի օ այր քօլօնէն շատ աւելի սուղ գինով :

Առաջ լուսաւորութիւնը մէկ կողմէն վարժապետները կը սիրուէին, ինչպէս յոյսը կը սիրուէր քարիւղը :

Թէ՛ մին և թէ՛ միւսները այլևս դադրեցան ըլլալէ ինչ որ էին ևս կոչուած էին ըլլալու :

Հիմա կիները աւելի աժան են քարիւղէն :

Ասանկ գիներու պիտի հասնի եղեր քեթրոյ ըսուած այդ դարչելի հեղուկը, որուն յարզը անոր հանքերը և հորերը ունեցողները գիտէին միայն :

Քարիւղը անմրցելի arriviste մը եղաւ :

Եթէ պատերազմը ատեն մը ևս այսպէս շարունակէ, պիտի գայ օր մը որ քարիւղը պախաւանները չեն որ պիտի ծախեն, այլ Բիկմալիսներ, Միք և Քօթրրան, Քալիվրուսին և թոյսը անքիխաճիները :

Եստ չեմ դարձանար քարիւղին ասանկ սուղնալուն : Գիշեր ատեն գործածուելիք թոյսը լսներն ալ տարօրինապէս սուղ եղած են. առէք օրինակի համար, կիները, champagne, truffes, դոհարեղէնները, aigrettesները, բոֆերը և սոսիսան : Մնացեալները գտնել ձեզի կը թողում :

Այս դնայքով պիտի գայ օր մը որ մենք այլևս չստանաք, շատ elegant մարդեր կամ կիներ պիտի համարուինք, եթէ կարենանք մեր թաշկիմակին վրայ քանի մը շիթ քարիւղ կոթեցնել :

Մարտներու և գլխի ցտ ունեցողներուն ալ քարիւղի շիշ մը պիտի մտնեցնենք քիթերնուն :


Առաջ մեր սիրուհիներուն իրեն նուէր extractի շիշեր կը նուիրէինք : Այսուհետև տալիքն ալ պիտի ըլլայ կազի քեկիֆե մը :



ՄԵԾ-ՊԱՅԻԻ ԽՕՍԲԵՐ

(Թարգմանաբար ֆադուած

ՄԱՐՍԷԼ ԲՐԷՎՕՒ Feminités հասորէն)



«Եթէ, սիրելի Տիկին, մէկն ըլլայի այն մեծարոյ և միևնոյն ասուն յանկուցիչ խոստովանահայրերէն որոնց՝ Չասկի նախընթօրին կը դիմէք ձեր մեղքերը վիպելու, արձակում տալէ առաջ, դրեթէ սա կերպով խրատական մը պիտի կարդայի ձեզի :

«Ինչ և քիտասարդ էք, աղջիկս, ամուսնացած, բարձր դասուն մէջ ապրող և ի Բարիդ դորս բերմունքներ որ մէկ կողմէն ձեր սուաքինութիւնը աւելի արժանաւարձ կ'ընծայեն և միւսէն՝ ձեր հոգւոյ փրկութիւնը նուազ ապահով :

Տակաւին պատուաւոր կին մըն էք անչուշտ, այս բառին անձուկ խնայում և այն մանր ու մունր սոյթաքումները որոնց սասակացող պատմաբանութիւնը կ'ընէիք ինծի քիչ մը առաջ, մեղքեր ըլլայէ աւելի մեղքի խանձեր են սուսկ : Չգոչ կեցէք սակայն, ձեր պատուաւորութիւնը այնքան քիչ հեռի ըլլալ կը թուի ինծի գրիպանքէն, այնքան քիչ, որ դիպուածին մէկ ամենափոքր կամչատութիւնը կրնայ, շատ կը վախնամ, հնհնուքի խել մը պատճառներ տալ ձեր պարոն ամուսնոյն :

«Ապահովարար, ձեր այս անկայութեան վրայ դուք ինքնին չէք կասկածիր : Դուք սապէս կը մտածէք. — Ահա երկու տարի կ'ընէ որ սկզբունքէ դուրկ այրերու և շատ մը յարաբերութիւններ մշակող կիներու մէջ կ'ապրիմ, երկու տարի է որ եսուէս իյնող շատեր դամուեցան, մէկէ աւելի փնտուած դարպասավարժ անձեր իմ հաւանութիւնս մուշ

բացին , բայց ես միշտ պատուաւոր կին մըն եմ : Ասկէ ետքը
բանէ մը չեմ վախնար : Սիրոյ դէմ պատրաստուած եմ այլևս :»

Վտանգաւոր պատրանք , աղջիկս :

Ձեր բարոյական և ֆիզիքական անասլակամութեան դէմ
ասոր անոր ժտանքներէն եւ ոչ մէկը անօգուտ չէ եղած ի շահ
սատանային դատին , թէեւ ամէն անգամուն ալ սատանան ,
չփոխարար ետ մղուած ըլլայ : Այս ըսածիս վրայ վստահ ըլ-
լալու համար բաղդատութեան դրէք ձեր ամուսնութենէն
երկու ամսուան ետքի կինը և այն կինը որ էք այսօր :

Նախ եւ առաջ պիտի նշմարէք թէ , երկու տարիներու
այդ ճամբուն վրայ , ծուէն ու ծուէն կորսնցուցած էք սքանչելի
առաքինութիւն մը որ չքեղ պատմութեանի մը պէս դձեղ ամ-
բողջովին կը ծածկէր : Պարկեշտութիւնն էր այդ : Այս' , աղ-
ջիկս , պարկեշտութիւնը' այն խնամով որ այդ բառը սահ-
մանակից կ'ըլլայ ամօթխածութեան հետ : Այդ բանէն դուք
այլևս չունիք : Աշխարհիկ կիները — դոնէ անոնք որ կուզան
կը խոստովանուին ինծի , անոնք ալ շատ չունին այդ «պար-
կեշտութիւն» ըսուած բանէն : Միտքերնիդ բերէք այն վշտա-
գին երկխոյր , շուտ մը հասած անժուժելի անդոն մը ըլլալու
աստիճանին որ ձեզի կը պատճառէին' ասկէ քիչ առաջ , ան-
պասկառ խօսակցութիւն մը , անպատշաճ տեսարան մը , չար-
ժուածքի մը ուրտ ազիծը . բնաղգօրէն նեղութիւն կը զզայիք
այդ բաներէն առանց պէտք ունենալու կոչում ընել ձեր ա-
ռաքինութեան . բայց ինչպէս կ'ըլլայ որ , առանց ուշադրու-
թիւն ընելու , անդադարար , կամայ կամայ կը թոյլատրէք
կոր , կը տանիք կոր ինչ որ երբեմն այնքան կը սրանեղէր
դձեղ :

Սովորութեան յամբաճառ մաշուծը եղաւ ասոր պատճա-
ռը , ուրիշներու հեշտախօսութեան քուրբուտումը' մօրենական
դաստիարակութեամբ ձեր սրտին վրայ ցանուած զգաստու-
թեան նուրբ փոշիին հետ : Անդադարար թոյլատրեցիք' ձեր
չուրջը' վայելչազէտ լիտիութիւնը և յետոյ համ տուիք անկէ ,
թէեւ ուրիշներու միջոցաւ համ առիք , ես ըստծո գիտեմ ,
բայց ատիկա ինքնին այլասեռում մըն է , անկում մը :

«Ետքէն ալ հաւատարմ մէկ կողմ դրիք : Ո՛հ , ասով հան-

դերձ գիտեմ թէ եկեղեցիներու ախորժակը միշտ կը սպասէք, պաշտաման պարտականութիւնները կը կատարէք որոնց ապացոյցն է ահա ձեր իմ առջեւ գտնուիլը: Սակայն սա բաւժ որ, ինչպէս որ կը թոյլատրէք յայտարարութիւնը, նոյնպէս ալ կը թոյլատրէք բարքերու անպարզութիւնը քրիստոնէական կամ մովսին թատերականացած կնիք երեւոյթին տակ որ օրուան նորոյթն է, անշուշտ ուշադիր եղած էք թէ ձեր դասակարգին պատկանող այրերը և կիները ի՞նչ անկեղծ անշահախնդրութիւն մը կը տածեն հանդէպ երբևէնի դասնանքներուն: Այս վերջին տարիներուն մէջ ինչ որ նիւթապաշտութիւնը կորանցուց վարդապետական գեանին վրայ շահեցաւ գործնականին վրայ:

«Մեր բարձր դասակարգը անհաւատ է ըստ ինքեան, տարտամորէն սիրահարուած ըլլալ ցոյց կուտայ կէս գրական, կէս քաղաքական կատուծոյ մը: Դուք ալ, դուք դձեղ լաւ մը քննեցէք, աղէկ մը պրպտեցէք ձեր խղճմտանքին խորը հաւամքն է, սովորութիւնը, մարդկային նկատումներն ևն որ դձեղ առաջնորդեցին Մեծ-Պահոց քարոզներուն, անկէց ալ խոստովանոցին: Այդ ամէնուն խառնափնդոր, մածան շաղախն է, ազնուապետական սնուցիզնով քողարկուած, քիչ մը առաջուան ըսած քաղաքա-գրական կատուածը դուրսէ այդ տեսակ պաշտամունքով մը կը դոճանայ, բայց երբեք չի դոհացներ այն հայրագորով և միենոյն ատեն ահեղ կատուածը որուն ձեր երիտասարդութիւնը կը հաւատար դեռ չամուսնացած:

* * *

Ահաւասիկ, աղջիկս, այսպէս դուք քշուած տարուած էք աշխարհկութեան մէջ, պարկեշտութենէ մերկացած և հաւատքէն այրի, թերևս դուք անկեղծօրէն կը կարծէք թէ հակառակ այս ամէնուն պիտի կրնաք պատուաւոր կեն մը մնալ:

Պիտի աւելցնեմ նոյն իսկ թէ չեմ հասկնար որ ինչո՞ւ պիտի ջանայիք այդպէս մնալու: Տրուած խօսքը յարգելու համար արդեօք ինչ որ կը տեսնէք և կը լսէք ձեր շուրջը՝ կը հաստատեն թէ ի՞նչ քիչ կարևորութիւն կուտան այդ տրուած խօսքին, զայն չի յարգելը պղտիկ յանցանք մըն է

մաքսանհնգութեան և զողորսութեան յանցանքներուն պէս .
ընկերական հետեւանքներուն սարսափն է միթէ : Բա՛ , ձեզի
հետ ձեր շատ մը բարեկամները տարիային յարաբերութիւն-
ներու արկածախնդրութեան մէջ նետուած են :

«Այս միջոցիս ձեր լուազոյն ջատագու՛լութիւնը սա է թէ
ձեր սրտէն չէ որ թելադրուած էք և թէ մեղանշելու ետեւէ
չէք :

«Սքանչելի արամադրութիւն : Տեւակա՞ն է սակայն : Աճա-
րնչ որ պէտք է դիմանայ ձեր ամուսնոյն հանգիստին և դո-
հուսակութեանս համար :


«Բայց յանձանքը ի՞նչ է , կ'ըսէք ինձի , եթէ պարկեշ-
տութիւնս և հաւատարմամբանակին ընթացքին մէջ խոյս
տուին ինչ : Իմ մտքէս ընաւ չէ անցած անոնցմէ հրամարիլ ,
անոնք մինակնին ձղեցին գացին : Ասոր մէջ խիղճս ընաւ
գործ չունի :

«Ատանկ թող ըլլայ , աղջիկս , ես ալ ձեր կարծիքէն ետ-
աշխարհիկ կեանքի մէջ դիւրին չէ պարկեշտութիւնը և հա-
ւատարմ պահել միանգամայն : Բայց անկարելի է որ աշխար-
հիկ կեանքի մէջ պատուաւոր կին ըլլալ երկարատեւ կերպով ,
առանց պարկեշտութեան և առանց հաւատքի : Հիմա՛ դուք
եղբակացուցէք : Պարզապէս ըսն մը կը հարցնեմ ձեզի , յըր-
բակեաց մը կրնա՞ք ըլլալ , նոյն բանը ձեր ամուսինն ալ կը
հարցնէ թիչ մը նուազ յատակ եղանակով եւ նուազ իրա-
ւամբ , որովհետեւ ձեր այժմու վտանգայից վիճակը մասամբ
իր գործն է և ամէն որ կը նպաստէ անոր :

«Ասորը մը կարենայ ըլլալու այժր կը դգա՞ք կոր ձեր ներ-
սիդին , խնդիրը ասոր վրայ է , ինչ որ դիմ կ'ահարելի , եւ կը
արամեցնէ միւսնոյն տանն : Իմ մասին տեսնելն է որ ամու-
սինները , եղբայրները , մայրերը , հոգիներու բոլոր այլ խնա-
մակայները իրենց խղճմտանքին և խորհրդածութեան առջեւ
բացարձակապէս կը խափանեն մուտքը բարոյական սա դար-
հուրելի առեղծուածին՝ հակօրինութիւնը աշխարհիկ կեանքին
և ամուսնական պարզ կենցաղին : Ասոր վրայ պէտք եղած
կերպով չեմ կրնար ծանրանայ ձեր և ձեզ վիճակակից կիներ-
բու քով :

Հարկ է որ ընտրութիւն մը ընեք պատուաւորութեան և աշխարհութեան միջեւ, եթէ սուրբ ըլլալու համար պէտք եղած ատաղձը ձեր քով կը պակսի: Բոլոր զգացական արտաբանութիւնները, բոլոր իրաւախոտութեան ջանքերը ըսածէս կէտ մը չեն փոխեր: Պէտք է ընտրութիւն մը ընել, Ս. Գիրքը ձեզի աս կ'ըօէ յստակ եւ պողպատի պէս հասու եղանակով: Եւ իրաւունք ունի:»

Ասանկ պիտի խօսէի ձեզի, սիրելի տիկին, եթէ ո՛ր եւ է պերճաշուք մասուսի մը մէջ, ուր մեծարոյ և յանկուցիչ խոստովանանայր, կոչուած ըլլայի Մեծ-Պահոյ քարոզներ տալու և գոյիք թե՛ծի վիպելու այն մտորումները որ ձեր խրղճմանքը ծանրաբեռնեցին այս ձերան ընթացքին:



ՀԱՅՐԸ ԵՒ ԱՂՋԻԿԸ

(Յիշատակներուս ընդմէջէն)

Lo que debe ser, No puede faltar.
(Սպանիական առած)

Սպանիական վերողբեալ առածը Ակրիտիթէսի հայրենակիցներուն բերնին մէջ կը լողայ և իրաւամբ: Անոնք կ'ըսեն, ըլլալիքը կ'ըլլայ, չի կրնար վրիպիլ: Ահա՛ ինչու Արաքսին խնս չպիտի ըլլար և չեղաւ: Այս եղածին մէջ ստեղծեց, ո՛չ ան յանցանք ունէր և ոչ ես: Բաշղը և կամ մեր երկուքին ճակատագիրը չուղեցին որ մենք միանանք իրարու, մեր եր-

կուրին համար ալ պատահար մը եղաւ ատիկայ, որմէ ակա-
մայ ճողոպրեցանք, առանց բան մը տուժած ըլլալու :

Այն թուականին որ այս հովուերգութիւնս սկսաւ, ես
դեռ նոր առաջին քայլերս առած էի գրական դժխեմ սու-
պարէզին վրայ և տակաւին անփորձ Ռօպէնսօն մըն էի սի-
րոյ աշխարհին մէջ, բայց որովհետեւ մեր դիմացի տուներ
ընակող ծնողքի մը միամօր աղջիկն էր Արաքսին, զիչեր ցե-
րեկ զիրար տեսելով, անոր խիստ գեղանի և կուրծքը ստէպ
ստէպ հոլանի և բաւականաչափ խելանի ըլլալը մէկ կողմէն,
և իմ սիրատենչիկ նորածիլ զգացումներս միւս կողմէն, պատ-
ճառ եղան որ սիրահարութիւնք իրարու : Եթէ անիկա իր ֆի-
զիքական առաւելութիւններովը ասրբեր միջովայրի մը մէջ
ծնած ըլլար, ասբախոյս չի կար որ զինքը աշխարհիս իբրև
ութերորդ հրաշայլքը պիտի պաշտէին : Իմ թեւերէս խոյս
տայէն ետքը այդ երկրածին հրեշտակը, հիմա չեմ գիտեր թէ
որո՞ւ կուրծքին վրայ դադած է թառիլ, թէ եւ գիտնայն ալ
բանի մը չի ծառայիր, որովհետեւ հիմա՝ կեանքիս վերջա-
լոյսի շրջանն է որ մտակցած է այլևս : Ես՝ Արաքսին
չատ երես կուտայի, ան ալ՝ ինծի համար հողի կուտար,
թէ եւ ես բնաւ աչք չունէի այդքան բարձրերուն, բնդհա-
կառակը, իմ տիրանայ ուղած բանս աւելի ստորին յարկի մո
վրայ կարելի էր գանել : Այդ որերէն ի վեր քաանեւհինդ
տարիներ անցած են և անկէջ ի վեր ես երբէք չեմ զզջացած
ուղածիս տիրացողը ես չըլլալուս :

* * *

Արաքսին՝ իր շատ մը շքեաց յատկութիւններուն մէջ ա-
մէնէն շատ սիրածս իր գրասիրութիւնն էր որուն վրայ կը
հիանայի :

Մեր սիրահարութեան ամէնէն աւելի ստատկացած շրջ-
անին մէջն էր, որ օր մը իրենց տան մէջ տեսանք որ մեր
երկուքէն գտաւ ոչ ոք կար : Սգտուելով այս հարուարէպ ա-
ռիթէն, խեղճ աղջիկը աղաչեց ինծի որ իր անձնական աչ-
պօսին մէջ ձեռքովս երկտող մը դրեմ դոր իբրև յիշատակ մը
քաղցրօրէն պիտի պահէր իր անձատենեակին մէջ : Ա՛յ թէ ա-

դաշանք մը , այլ հրաման մը իսկ ըլլար , կաղմ ու պատրաստ էի սիրայօժար կատարելու զայն , բաւական էր որ զիս հրապուրող անոր շրթունքները ըլլային զայն արտասանողը :

Ուստի , երկու պաշիկի միջեւ , մէտէորայի մը հանգոյն , քովէս հեռացաւ եւ վաղեց վեր դնաց իր ննջասենեակէն վար բերելու համար իր գանձը որ իբրև նուիրական Kapsake մը կը ծառայէր իրեն :

Մաքուր և անբիծ էջ մը հաղիւ բացած էր առջեւս , երբ անոր վրայ դողդոջուն ձեռքով մը հեռուեալ երկառողը գրեցի .

«Շասունց ի վեր , հարկաւ գիտես , ֆեզ կը պաշտեմ Արախի ,
Բայց իմ սէրըս լաւ բայատրող հուժկու բան մը կը պակսի :

Տասնըհինգ օր շանցած , սիրուհիս նորէն ցոյց տուաւ իր աղպօնը որ հօրը ձեռքը անցած ըլլալով , իմ գրած երկու տողերուս տակ երրորդ մ'ալ աւելցուցած էր . Ահա՛ իր գրածը .

Փնջուած բառքդ , գսած եմ ես , կայնե՛ ըսեմ , ԲԱՐՆԱՔՍԻ ,

Ասոր տակը ես ինքս աւելցուցի .

• Այ քու հայրդ... ի՛նչ թերս ընարդ է , ի՛նչ ախի :

Հայրը՝ միշտ իր ձեռքով աւելցուցած էր անգամ մը ևս .

«Աս գրողը , ա՛յ խեղճեցուց կ'սկսի ,

Ես ալ կը փակեմ այս գրչատպայքարը հեռուեալ տողով , միշտ միևնոյն էջին վրայ և միւսներուն ամմիջապէս տակը ,

«Քու աղջիկըդ զիս խեղճեցուց , շիսակն ահա՛ ես ըսի» :

Այս տողէն վերջն էր որ իմ և Արաքսիին միջեւ գոյու-թիւն ունեցող հովուերդուժիւնը վերջացաւ , հովուերդու-թիւն մը , որուն ի՛նչպէս սկսած ըլլալը չեմ յիշեր , որովհե-տեւ երբեք գիտցած չունիմ :



ԿԵՂԾ ՖՐԱՆՍՈՒՅԻՆ

(Յիշատակներու շնորհիւ)



Ասկէ քսան տարի առաջ էր, մտերիմ բարեկամներէս մէկ քանին ուղած էին ԱՐԱԵ մը խաղալ ինծի և հաւատացնել տալ ինծի թէ Ֆրանսուհի մըն էր Պոլիս ծնած հայուհի մը :

Ահա՛ ինչու դիչեր մը առաջարկեցին ինծի միտին Երթալ Տիկին Քլէմանթինի տունը, որուն կահաւորուած սենեակները վարձած կ'ըլլային ընդհանրապէս Բօնօքօրախայի և Բալէտը Բրիտիայի երդուհիները և Բերայի բարձրաթուիչ ֆօֆօթները :

Ժամը դիչերուան տասեմէկը կար կըր խմբովին տա՛նքս ալ երիտասարդներ՝ ափ ափինք այդ հիւրասէր տան ուռնակը :

Շիտակ Ելանք վերի ընդունելութեան սրահը, որու բազմոցներուն և թիկնաթոռներուն վրայ ընկողմանած էին մէկէ աւելի կիսաշխարհիկ հանրակիներ : Մէջերնին՝ հատ մը կար բաւական զեղանի, սև մազերով և սև աչքերով դեռ երիտասարդ կին մը որ սիրայիր կերպով ընդունեց հետս եղող ընկերներս. տանք ալ դայն ինծի ներկայացուցին, միաբերան ըսելով. «Ահա աս է մեր Ալսէ բոստ օրիորդը, որ դեռ նոր եկած է Բարսիլէն :

Ալսէ բոստնին, թոթով լեզուով մը քանի մը ֆրանսերէն խօսքեր ուղղեց ինծի .

= Պօնտուս, միւսի .

— Վա զ'այե պիեկն, և շատ մը ասոնց պէս մնտաի խօսքեր :

Միջոց մըն ալ, ամառուան մէջ ըլլալնուս, պատուհանին մօտ գնաց և մերկ ուսերուն վրայ ունեցած մէկ թևիկ և շալր խաւարիկն վրայ նետելով դռչեց .

= Ո՞ւ՞թ, քոն ի՞նչ փե շօ . . . և անմիջապէս յետոյ ինծի

դառնալով, շատ անուշ ձայնով մը ըսաւ .

— Ժը վու բրուի , տօնէ մուս ուն ցիկառա :

Այդ ցիկառա բառը արտասանելուն պէս , անմիջապէս հասկցայ որ ըսողը Ֆրանսուհի մը չէր կրնար ըլլալ , այլ հայ մը կամ յոյն մը :

Տեսայ որ խաղի մը դո՞ն էի և շուղելով անբանի մը տեղն անցնիլ ,

— Տղաք , ըսի , ձեզի ո՞վ բասու որ այս կինը Բարիզէն եկած Ֆրանսացի է . . . : Ես ձեր դիտցած ապուշներէն չեմ : Հասկցա՞ք հիմա :

— Ասանկ կնկան մը անունը ձեր ըսածին պէս (Aimée) էմէ չի կրնար ըլլալ :

— Հապա ի՞նչ կրնայ ըլլալ :

— Déléslé . բայց աւելի ճիշդ պիտի ըլլար haie ըսել , քանի որ Հայուհի մըն է :

Յանկարծ , ինծի մօտենալով հարցուց :

— Հայ ըլլալս ինչէ՞ն հասկցար :

Փոխանակ ցիկառա բառը զինքը մատնած ըլլալը խոստովանելու և քիչ մը աւելի հետը իյնալու համար , պատասխանեցի , — Հայու կնիկ ըլլալդ հաղուստներէդ հասկցայ :

— Սուտ ես , բասու , ես տտանկ բան բնաւ խմացած չեմ , և մեծ հայելիին մօտենալով , վէս շեշտով մը բասու :

— Ո՞ւրիչ հանեցիր , անանկ բան չի կայ :

— Դուն վարիսին չես երթար , իմին աչքերովս նայէ և պիտի տեսնաս :

— Աչքերդ փոխ տուր որ նայիմ :

Երբ իր սննեակը գացինք , քիչ բաւով իր կեանքին ամբողջ պատմութիւնը բրաւ ինծի :

— Քսաներկու տարեկանիս երկու աղջիկ դաւակով որբեայրի մնացի . երկու երեք տարի սպասեցի որ մէկը գտնամ նորէն կարգուելու համար , բայց բազում դիմացս չեղաւ եւ ես ալ տկամայ այս ճամբան բռնեցի , որովհետև ուրիշ բան չէի կրնար ընել : Երկու աղջիկներս կրթելու համար մեծը գիշերօթիկ վարժարան մը դրած եմ և պզտիկը ուրիշ դպրոց մը կ'երթայ . ուրիշ բան չէի կրնար ընել տարին 68 ոսկի հանելու համար : Ահա ինչո՞ւ հոստեղուանքը ինկեր եմ , ֆե՛ժիս

համար չէ, այլ դաւաններու կրթութեանը համար :

Ես արդէն գիտէի, բայց այդ գիշերը անգամ մը ևս համոզուեցայ թէ կիները կրնային գէշ ըլլալ, բայց մայրերը բնաւ :

Կեղծ ֆրանսուհիս արցունքոտ աչքերով պատմած էր ինծի այս ամէնը :

Ձիւքը քիչ մը մխիթարելու համար պարկեշտ եղանակով մը ըսի իրեն .

— Մեղք որ ժամանակին քու մայրդ ալ ասանկ կրթութիւն տալ չէ տուեր քեզի : Հիմա փոխանակ այս ճամբան բռնելու, վարժուհի կ'ըլլայիր, աղջիկներու դպրոցէն ստակր հանելու համար :

Բայց չի մեկնած, հարցուցի իրեն .

— Հիմա շիտակ ըսէ, Aimée ես ի՞նչ ես. քու բուն անունդ ի՞նչ է :

— Իմ անունս Ադաւնի է, պատասխանեց :

— Աս ալ չեղաւ, վրայ բերի, քու անունդ Ադաւնի ալ չի կրնար ըլլալ :

— Հապա ի՞նչ ըլլալու է :

— Ադասի, Սդասի :



ԵՐԿՈՒ ԱՍՈՒՍԻՆՆԵՐԸ



Բ.



(Դարձեալ Մարտի Բրեւոյի հասարկն)

Առևտրական սրահատեակայ մըն է, ինքն իր դիւինն ձրգուած, խելօքիկ մարդ մը որ լքուեցաւ ժողէֆինի կողմէ, անսպասելի և վարնոց կերպով: Ան՝ նախանձուտ շէր և ոչ այնաստիկ սիրահարուած. չորս ու կէս տարիէ ի վեր է որ նետը կարգուած էր, բայց մարդը մտքէն իսկ չէր անցրներ թէ ժողէֆին իր ձմեռիկած դէմքով և ջլթիկ բեկբեկումներովը, օրին մէկը կրնար փորձանք բերել դիւսուն և սրամաշուք սրտածուկ իրեն: Կէս օրէ մը կտք, ժողէֆին տունէն փախաւ, առանց մարդու բան բսելու և մէկ օրէն միւսը ֆօֆօր կողաւ սկիզբը աննշան, բայց կրթօղով քիչ մը ծանօթ անուն մը հանեց բարձր դասու կնամայներու աշխարհին մէջ, կտքէն ըլլալու համար մէկը այն բարձրաթոխ ֆօֆօրներէն որ կրբեմն իրենց անունները ապագրուած կը տեսնեն մեծ արուեստագէտներու անուններուն հետ խառնիխուռն:

Այդ աշխարհաթիւնը տարուան մը մէջ կատարուեցաւ: Կքուած ամուսինը ի՞նչ կ'ըլլար կոր արդեօք...: Առաջի շարաթիւները տեսակ մը ապշանք եկաւ վրան. կարելի բան չէր տարիկա. սուտ էր այդ փախուտար. ժողէֆին չէր կրնար կծիկը դրած բլլալ, դուքսը՝ էրկրնէն դաս ուրիշ պարտի մը միանալու համար: Յետոյ, երբ մտքին մէջ տեղաւորուեցաւ այն գաղտնիքը թէ այդ տարակոց կինը իրապէս բացակայ էր և անդարձ կերպով, մարդը հիւանդ պատկեցաւ: Երեսի վրայ ձգուած այդ լարկին մէջ դանսապանած հին զինքը խնամեց. ինքն այ հասկցաւ թէ իր աչքերը որքան անձկա-

նօք կը փնտռէին՝ իրենց վարժուած այդ նօսօչիկ դէմքով ,
խարտիչազեղ դեռատի կնկան տեսութիւնը :

Յետոյ , կամաց կամաց , իր առողջութիւնը նորէն գտաւ
և կրկին մարդու կարգ անցաւ ինծի և քեզի սէս ուտելով ,
խմելով , քաշելով և կեանքի առօրեայ գործերը կատարելով
առանց սուր տառապանքի , միայն իր հորիզոնին մէջ աւելի
թախծալից , աւելի սև բան մը կար : Վայրկեան մը իսկ մըտ-
քէն չանցուց ժօզէֆինը հետապնդել , ետեէն իյնալ , առն
բերելու ջանքեր ընել և նոյն իսկ յանցանքը գործած պահուն
յանկարծակիի բերել զայն ստիկանի մը ընկերակցութեամբ ,
որ և է ձեռնարկ ծանր կուգար այդ վեհերոտին , այդ կորո-
վագուրկ մարդուն : Չինքը կրեաի վրայ թողուցած էր , որո՞ւ
հող , ինքն ա՛լ մինակուկը պիտի ապրէր : Ուրիշ կնկան մը
ետեւէն իյնալ և վերամուսնանալու համար դատուիլ կնոջ-
մէն , ասոնք ա՛լ իր կարողութենէն վեր բաներ էին . ինքն
իր թշուառութեան և մեծութեան մէջ կքեցաւ մնաց և տարի
մք չանցած՝ նոյն իսկ սիրապրութիւն հանդէպ ու է խէթ , ուէ
առեկութիւն չէր զգար :

* * *

Փախուստէն տասնևհինգ ամիսէ , աւելի ետքն էր որ ան-
գամ մը հանդիպեցաւ անոր , նախ տատամեցաւ և չի կրցաւ
հաւատալ աչքերուն : Յունիսի վերջն էր , Եան գ'էլիզէի
պղտիկ ճաշարաններէն մէկուն մէջ ընթրիքը ընելէն վերջն
էր որ կրգեցիկ սրճարան մը դադած էր , ապուշ , անհամ կը-
ղեր մտիկ ընելով մարտողութիւնը դիւրացնելու համար ,
յանկարծ՝ իրմէ տասը քայլ անդին , կողմնակի օթեակներէն
մէկուն մէջ տեսաւ զայն , անոր հետ միեւնոյն օթեակին մէջ
ընկերովին նստած էին այլանդակ արդուզարդով ուրիշ կին
մը և անքննադատելի ճաշակով փողկապեր դրած՝ ծաղկակիր
երկու պարոններ : Չայն տեանելէ ետքը , այլևս աչքերը ա-
նոր վրայէն չի վերցուց եւ չի նայեցաւ ուրիշի : Այգքան կարճ
ժամանակի մէջ ան որքա՞ն փոխուած էր : Մայթապնայի
(Pottia) բեկբեկումով չպիտոյ այդ տափակ կնոջմէն , դերձա-

կուհին յօտարան , մազերը վէտվէտող վարսայարդարը , արդի կնոջական գեղեցկութեան այդ համբերատար և ճարպիկ արհեստաւորները կերտած էին նոր էակ մը , տարասովոր , կայտառու , պճնազեղ , պերճանքի և հաճոյքի գեղոր մը որուն նմանները՝ մէկ գիշերուան մշջ հարիւրներով կը տեսնուէին Բարիդի մէջ , ըսոյց ժանի աչքին՝ անիկա իր տեսակին մէջ մէկ հատիկ երեցաւ , որովհետեւ այդ գիշերէն առաջ չէր պատահած որ ժան՝ անոնցմէ մէկ հատին աչք անկէր՝ այդ սուղ և մեծածախս հազելի պուպրիկները հարուստներու գրուարձութեան համար վերապահուած ըլլալուն : Երկար տանն անոր երեսն ի վար կախուած մնաց ակնապիշ , իր ամբողջ համբերութիւնը մէկտեղ բերաւ՝ անոր շինովի դիմակին տակ գանկու համար երբեմնի ժողէֆինին դիմադները : Անոր այսինչ կեցուածքը , օթեակին յենավանդակին վրայ կռթնցուցած թևին մէկ շարժումը , խօսած պահուն բերնին ձախ անկիւնին վեր ժողվելու մէկ ինքնայատուկ եղանակը , այս ամէնը կը մտանէին երէկի ժողէֆինը որ վայրկեանի մը համար մտքին մէջ յարութիւն առած էր : Ժան այս ամէնը ուշադրութեամբ դիտած տանը ու է գտնութիւն չէր զգար սրտին մէջ , նախանձատ չէր բնաւ , ճերմակ քամէլիայով պարտնը անոր հետ էր անշուշտ : Այսքանը ըստ ինքն իրեն , խիտտ պարզ բանի մը պէս , ինչպէս պիտի ըսէր եթէ ուրիշի մը կնկան վրայ խօսելու ըլլար : Եւ զգացածը նախանձ չէր , աւելի շատ սաստկացոյց յանկարծախարութիւն մը , տեսակ մը պղտոր դարմանք , որուն նմանը պիտի ունենար դատաւարի ջատուկ մը երբ տեսնար որ դատակը՝ հռչակաւոր մարդ մը եղած՝ Բարիդէն կը վերադառնար կոր : Ընտանք եղերէ որ ժողէֆինը ըստ ամ այդ կնկան կտորէն կրցեր են՝ տանուհինգ ամսուան մէջ ասոր պէս կխաշխարհեան մը մէջտեղ հանել :

Այս բանը երբեք մտքէն չէր կրցած անցընել , երբ անիկա իր տանը մէջ խեղճ ու կրակ չբջաղգեստով մը , փոյուն և բրբրտած կերպով մը կը սրկտար : Եւ ճերմակ քամէլիայով երիտասարդը որ անոր ծածրակին վերօքը կը հակէր , բուն կերպով սիրահարուածի երևուցիւր ունէր , կարծես ան կրցանկար սակիփայլ այդ գանդուր մազերուն , այդ ծածրակին

և ինչ որ կը պարտուկէր այդ սեղմիրանը և ինչ որ շրջազգեսար
կ'քօղարկէր : « Աստուծոյ ամէնքն ալ խմս էին , կը խորհէր ժամ և
կը ջանար միտքը բերել կնոջը քնքուշ , նուրբ մարմինը և
ամուսնական շոյանքները : Բայց որոշապէս առիկա միտքը
բան մը չէր ձգեր և ոչ ալ բան մը որ իր զգայարանքներուն
վրայ մասնաւորապէս ազդած ըլլար : Ինչ փոյթ սակայն , ա-
ռանց տեսակ մը հոլարտութեամբ չէր որ մտածեց թէ այդ
նրբակերտ գեղորին առաջին տիրացողը ինքը եղած էր , վերջ
ի վերջոյ իմ աւելցուկներուս է որ տէր կ'ըլլայ կոր ան » :


Ներկայացուածը վերջապառ առանց որ ինքը կշտացած ըլ-
լար կնոջը երեսը նայելէ : Ժօղէֆին չէր ճանչցած զինքը ,
անշուշտ թիժին դրած չըլլալուն համար իր խեղճուկրակ ժա-
քէթը՝ բայց դոյն յարսըսիւներու և ժրախերու մէջտեղ , ան-
նշան և աչքի չզարնող : Մնաց որ ժօղէֆին կարճատես էր ,
անոր ատանկ ըլլալը արդէն ինքը՝ գիտէր : Ինչու հոգը չըրաւ
երբ տեսաւ որ իր նախկին կողակիցը սիրականին թեւը մտած
դուրս կ'երնէր և կը ցատկէր գեղեցիկ վիթրոսիս կառքի մը
վրայ , որուն ճանճկէն դոյն երկու բօնեներ լծուած էին : Ան-
միջապէս ձիերը սրարչաւ մեկնեցան :

* * *

Յաջորդ օրը անոր ճամբան սպասեց , ճիշդ այն ժամուսն
որ կիսաշխարհիկ կիները սրաւ կ'երթան : Հեռուէն ճանչ-
ցաւ անոր ճանճկէն դոյն բօնեները և կատոյցս ներկուած
վիթրոսիսն : Երկար ատեն կրցաւ աչքով հետևիլ ժօղէֆինի
յամբրնիժաց պատյաին : Մէջ մըն ալ ժօղէֆին կառքէն իջաւ և
մայիթին վրայ հետիտան քայեց : Ժամը գողի պէս պահուրտե-
ցաւ , ևտ ևտ քայուեցաւ , վախնալով որ կը ճանչցուի , բայց
տունը դատնալէ առաջ երբ ժօղէֆին Քասթաւէն ներս մտաւ
քիչ մը կաթ խմելու համար , ժամ միջոցը դտաւ սպասեակ
մանչուս հետ տեսնուելու և հասկնալու անոր հասցէն , Բրօնի
փողոց , թիւ 23 :

Անկէց ի վեր , համբերատար դիտողակեցութեան մը չնոր-

հիւ, ժամ առ ժամ կրցաւ ճշդել իր երբեմնի կնոջ ներկայ կենցաղավարութեան համակարգումը, որքան որ իր զբաղումները և պաշտօնեայի վիճակը կը թոյլատրէին իրեն, ահոր ետեւէն գնաց Բարիդի մէկ կողմէն միւսը, ըլլա՛յ Գուան, թասրոնը, ձիարշաւներուն, ինչպէս սիրահարուած վարժարանական մը կը հետեւի պարուհիի մը, Բայց ինքը, սիրահարուած չէր. քիչ քիչ վարժուեցաւ մենակեցութեան որ այնքան լաւ դիտէ վշտահար հոգիները կապտել. բայց ժողէֆիներ հեռուէն տեսնել և հետեւիլ անոր, ասիկա իր կեանքին կէտ նպատակի մը եղաւ և իր անլի ժամերուն քիչ մը թթու համ առաւ : Անոր ետեւէն երթալով, երթալով Բարիդը երեսուն ելաւ աչքին և ճանչցաւ դայն : Երբեմն ալ վեհերոտ սիրահարի իր այլանդակ և անխորհուրդ հեռապնդումներու ատեն, հետը բարեկամ մը կը տանէր, գեղանին ժօն ցոյց կուտար այդ ընկերոջը որ իրեն պէս համը չէր առած, բայց յարգանօք կը նայի Բարիդեան դուստրճասէրներու աշխարհին : Տեղն ի տեղօքը տեղեկութիւններ կուտայ անոր բնակած տան ունեցած անդրուվարերուն, հազած տակի ճերմակեղէններուն և նոյն իոկ անոր մարմնոյն վրայ : Ու երբ ընկերը բերնին ջուրերը վաղցնելով կը հարցնէ իրեն, «Բայց այս ամէն բաները ինչէ՞ն դիտես դուն», կը պատասխանէ ան գոհունակ և գաղտախորհուրդ ձայնով մը. «Ես դայն ճանչցած եմ շատ մօտէն» :



ՇՈՔ—ՄՈՔ



Սէրը խոյս կուտայ զինքը փնտռողէն և կը փնտռէ իրմէ խոյս առողները :

* * *

Երջանկութեան արժէքը, զայն կորսնցնելու վրայ եղած առեւննիս մինակ կրնանք ձանձնալ. ահա ինչո՞ւ ապաքինութիւնը զգացնել կուտայ մեզի թէ ի՞նչ անուշ և թանկագին բան է առողջութիւնը : Այս ըսածս անձնական փորձառութեան մը հեռեանքն է :

* * *

Ազատին համար ըսուած է թէ առաջին քուեր իր վերջին հանգիստը եղաւ : Եւ ասոր պատճառը նւան էր միայն : Աս ըսողը մինակ ևս չեմ, Աստուածաշունչն ալ կը ձայնակցի ինձի :

* * *

Շատերու համար կին ըլլալը արձեատ մին է և ոչ թէ սեռ մը :

* * *

Երբ սէրը գործ մը կ'ըլլայ, զգացում մը ըլլալէ կը դադարի :

* * *

Հողը թեթև չըլլար այն կիներուն վրայ որոնք կենդանի եղած առեւննին թեթև եղած են իր վրայ :

* * *

Արուեստներուն ամէնէն կնճառոր, ամէնէն դժուարը, ամէնէն գերազանձը և բոլոր ճաշակներուն գոհացում առողջ գրականութիւնն է : Ահա՛ ինչու անոր մէջ յաջողածը բոլոր գեղարուեստներուն մէջ վարպետ մը կը համարուի :

* * *

Պատուաւոր և պարկեշտ մարդը կ'ըսէ. «Կին մը ունիմ եւ զաւակներ» : Ան՝ որ ոչ մէկն է և ոչ միւսը՝ չի խպնիր և կ'ըսէ. «Կիներ ունիմ եւ մինակ մէկ զաւակ» :

* * *

Մարդիկ կան որ շատ բան գիտեն բայց բնաւ բան մը չեն կրնար սորվեցնել ուրիշներուն : Բայց կան ուրիշներ ալ որ բան մը չեն գիտեր եւ ուրիշներու սորվեցնելու կ'ելլեն : Ասոնց անունը կ'ըլլայ «վարժապետ» : Ես ճանչցած եմ Պարոն Արամ մը եւ կամ Վահրամ մը որ դպրոցներուն մէջ Վօլթէռի լեզուն աւանդած են աշակերտներուն և հասցուցած են դանոնք մինչեւ Լաֆոնթէնի Le corbeau et le renardին, ինչպէս նաև անոնց սորվեցուցած են aimer բային խոնարհումը, տեսականը ձգելով անոնց եւ գործնականը վերապահելով իրենց :

* * *

Խելացի մարդը կ'ուզէ որ իրեն տրուած չեֆը à vue ըլլայ և իր առած կինը՝ à vie :

* * *

Տիկին Էլպիս, որուն ինչ խելացի կին մը և զաւակներուն կրթութեանը համար որքան հողածու մայր մը ըլլալը շատերս գիտենք, անցեալ օր իր տասներկու տարու Չարեհ անուն տղուն կը հարցնէ՝ անոր դարգացման առաիճանին վրայ դադարի մը ունենալու համար :

- Ըսէ՛ նայիմ, տղաս, Բիկան ո՞վ առաւ :
- Չարեհ. — Խաչոր ես չառի, մայրիկ :
- Մայրը. — Հապա ո՞վ առաւ :
- Չարեհ. — Չարուհին առած ըլլալու է :

Այս պատասխանէն ետքը, Չարեհ կծիկը կը դնէ և կ'ելլէ դուրս : Վրայ կուգայ հիւր մը՝ Տիկին Ագապին : Մայրը տղուն բաժը խնդալով կը պատմէ եկող հիւրին.

= Տղաքր առանկ կ'ըլլան, կ'ըսէ Տիկին Ագապի, իմին-

ներս ալ ասանկ են, աղաքը գտածուած յանցանք մը միշտ ի-
բարու վրայ կը նետեն :

Հինգ վայրկեան չանցած՝ երկրորդ հիւր մըն ալ կը մտնէ
ներս, եկողը Տիկին Պիատոն է :

Արդէն հոն գտնուող երկու կիները Ռիկայի պատմու-
թիւնը կ'ընեն, չի կրնալով խնդուկնին զոսկի : Տիկին Պիատոն
եղածին վրայ շատ կը զարմանայ և ինքն ալ խնդալով կ'ըսէ
տանտիրուհւոյն .

— Ինչպէ՞ս կ'ըլլայ որ տունէն բան մը կը պակսի և դուք
չէք գիտեր թէ առնողը ո՛վ է :

Եւ ըսել թէ երկնից արքայութիւնը այսպիսիներուն վե-
րապահուած է : Պարսպ տեղը խելացիները չեն ըսեր, «Beati
poveri. di spirito» :

* * *

Այստ մեծ հարստութիւնը և շատ գեղեցիկ կիներ, ար-
գելք կ'ըլլան որ իրենց տէրը եղողները հանգիստ քնանան :

* * *

Աստուած մեծ է, կ'ըսէ Ս. Գիրքը, ես ալ այս միջոցիս
ասոր փոխարէն կը պնդեմ թէ շատ պզտիկ է հացը որ ոսկի
կ'արժէ :

* * *

Ամուսնութեան մէջ մարդս իբ օրինաւոր կնոջը վրայ
փնտուածը և զինքը հրատուրողը, մինակ անոր մարմնոյն գե-
ղեցեութիւնը ըլլալու չէ, այլ հապա անոր հոգւոյն բարձրու-
թիւնը և նկարագրին ազնուութիւնը և՛ մտային կարողու-
թիւնները :

* * *

Մարդս երջանիկ ընողները ո՛չ հարստութիւնն է և ոչ ալ
ուրիշներէ շռայլուած պատիւները : Ինծի համար ճշմարտա-
պէս երջանիկ մարդը ան է, որուն խիղճը երբէք չէ տանջած
զինքը :

* * *

Էրիկ մարդիկ առանց ուղեւու կը կարմրին երբ կը բար-

կանան, իսկ կիները յատկապէս կարմիր կը քսուին ազուոր-
նալու համար :

* * *

Ֆլիբիթը՝ սրտի տրոփումները կազդուելու համար տըր-
ուած ոսկեղօծ դեղահատ մէն է. պարապ գաւաթ մըն է ան
զոր կին մը կը հրամցնէ ծարաւի պարոնի մը : Ճշմարտապէս
սիրած և հետեւաբար բաւականի տառապած կին մը Ֆլիբ-
իթողներուն կը նայի այն աչքով որով որդեկորոյս մայր մը կը
դիտէ այն պզտիկ աղջիկները որ պիտի խաղալու վրայ են :

* * *

Թատերական բեմերու վրայ երևցող այսօրուան քանի
մը հայերուն այլևս ներքի չէ դերասան անունը տալ անոնց,
այլ հապա պարզապէս ասլերասան են անոնք :

* * *

Ֆլիբիթը ճշմարիտ սիրոյ ջրաներկ մէկ պատկերն է :

* * *

Ներկայ համըրուպական պատերազմին վերջնական ար-
դիւնքը ի՞նչ պիտի ըլլայ. ասիկա ճշդել ուրիշներուն կը թո-
ղում. իմ դիտցածս սա է թէ, ասկէ առաջ մէկ կնկան չորս
էրիկ կ'իյնար, ասկէ աւելին ալ գտնողներ կային, բայց ասկէ
վերջը, դոնէ Եւրոպայի մէջ մէկ էրիկ մտրդը՝ քառասուն կին
պիտի կրնայ առնել, որովհետև այլևս Եւրոպայի մէջ երի-
տասարդներ գտնել դիւրին չէ : Պատերազմին վրայ իմ ամ-
բողջ դիտցածս ասկէ անդին չանցնիր :

* * *

Գեղնցիկ ձայն ունեցող երգչուհին կամ կերկերումէ կը
մեռնի և կամ double crocheէ մը, որ գայած ծուռ մը մըխ-
ուած է կոկորդին մէջ :

* * *

Տարիներ առաջ Տիբիթիուս բարը ևս դարբնեցի, բայց չէի
գտած այդ բառին իգականը : Հիմայ գտայ սակայն : Քիթե-
րիուսին իգականը կ'ըլլայ . . . իւրապրօսն :

* * *

Երջանկութիւնս . . . երանի անոր որ կ'երազէ զայն , քիչ մը խրոս է անոր վրայ խօսողը և վրան գրողը խղանալու մը սոսկ :

* * *

Սիրելի՛ կեանքը կ'երկարէ , իսկ տակը՝ կը կարճեցնէ զայն : Իմ ըսած ատկա ձեր գիտցած Adèle-ը չէ :

* * *

Շատեր կան որ ինձի համար գրող է կըսեն . բայց ես զիս կը դաւանիմ իբրև կրող մը :

* * *

Վախցէք ամէն անոնցմէ որ տեսակ մը ջերմեռանդութեամբ կ'աղօթեն և եկեղեցիներէն դուրս չեն ելլեր :

Փորձառութեան մը հետևանքն է այս ըսածս : Շարունակ աղօթողները անպատճառ յանցանքի մը և կամ մեղքի մը խայթը ունին իրենց խղճին խորը և աղօթելով է որ կը յուսան քաւել իրենց մեղքերը և հանդարտեցնել իրենց խղճմտանքը : Մեծահարուստ դրամատէր մը ճանչցած եմ ես որ սեղանաւորութեամբ կը զբաղէր , այսինքն բառին անպաճոյճ նշանակութեամբ ահալի վաշխառու մըն էր , ինէ դատ շատ ուրիշներ ալ կան որ այս ըսածս գիտեն և կրնան հաստատել ի հարկին :

Այս ըսած սարաֆս առտուները գործի չի դացած եկեղեցի կը մտնէր և կ'աղօթէր ծերազիր , քահանայէ մը տակի երկիւղածութեամբ և եթէ տեսնող չըլլար՝ անպատճառ մամին սլաակը չի լլվստած դուրս չախտի ելլեր :

Բայց անգամ մը շուկան ելածին պէս , իր դրասենեակը կ'երթար և իբրև նոր Շայթօք , աներևակայելի մեծ ատկասով փոխատուութիւններ կը կնքէր դրամի սկաք ունեցող և ներք մնացած սոււտրականներու հետ , որոնց չնորհիւ դիպած էր մեծկակ հարստութիւն մը :

* * *

Կոնքուռներու քանի մը ըսածներն են հետեւեալները որոնց համամիտ ըլլալուս՝ հոս մէջ կը բերեմ :

Սպառուած ժամանակին քանակը չէ , ինչպէս կը կար-

ծըռւի, որ վրական գործի մը գերազանցութիւնը կը յատկանշէ, ընդհակառակը վայն յօրինողին ինչ եռանդուն տենդէ բռնուած ըլլալուն տեսակը:

* * *

Բնական օրինօք կինը կը սիրէ հակասութիւնը (contradiction), շատ քայախուած աղջանը, թթուած և կամ փաստահամ (faisandé) որսեղէնները (gibiers) և անսխտան ու սրիկայ մարդերը:

* * *

Երկու տարի կ'ընէ որ անծանօթ և աննոցաւոր մէկը քովս եկաւ դիտեմք տեսնելու և ճանչնալու համար և գրէթէ ժամ մը տեւող այցելութեան միջոցին, երկար բարակ իր կենսագրութիւնը բերանացի ըրաւ ինձի: Հաղար անգամ բսելով, — կինս որ օրիորդ է, չորս զաւակներու հայր ըրած է դիտ:

Օրիորդ . . . և չորս զաւակի մայր: Ասոր քակէն օրերով չի կրցայ ելլել: Ես տեսած և ճանչցած եմ շատ մը կայսեր որ տիկին կոչել տուած են իրենք գիրենք, բայց առաջին անգամ ըլլալով կ'իմանայի կոր թէ Պոլսոյ մէկ մօտակայ գաւառին մէջ կայ եղիւր կին մը որ հակառակ ամուսնացած և 4 զաւակներ ունենալուն՝ տակաւին օրիորդ էր մնացեր: Իմ զարմացկոտ ապուշութիւնս երկար չի տեւեց: Շարաթ մը կտքը ինձի հասկցուցին թէ, օրիորդ ըսելով վարժուհի ըլլալը հասկցրնել ուղած էր ինձի:

Ահա ինչո՞ւ անկէ ի վեր երբ մէկու մը համար պարոն կ'ըսեն, անմիջապէս կը գուշակեմ թէ այդ մէկը ուրիշ բան չէ, բայց եթէ տիրացու մը:

* * *

Տրանկորդ գարուն մէջ բոլոր աշխարհիս վրայ հոշակ և անուն հանած մարդերը իրենց գլուխներուն կը պարտին շահած համբաւնին. միայն երեք կիներ գիտեմ որ յաջողութիւն գտած են . . . իրենց ոտքերով. Ասոնք են՝ Ռօզիթա Մաուրի, Զամպելլի և Այտա Պօնի: Երեքն ալ Բարիլլի Մեծ Օրէրային տաւջին պարուհիները (danseuses):

* * *

Աւելի խելացի գործ է տան մը վնցերորդ յարկէն փողոց
խնայր, քան անխիղճ վաշխառուի մը ձեռքերուն մէջ :

*
* *

Երբ ամուսնացած կնոջ մը սնունդը Իւզաբեր է, էրկանը
անունը ուրիշ քան չի կրնար ըլլալ, բայց եթէ... *fauguisar* :

*
* *

Այս հատորիս Շոգ-Մոզի բաժնին մէջ միայն կրնամ ար-
տատարել սոյն քանի մը ստանաւորները որոնք երբեմն գրչէս
սարդած են առանց ու է բանաստեղծի (poète) յուսակնտու-
թեան :

Մեր մէջ սոյնորարար յակասեղծ անունը կուտան ամէն
անոնց որ փոխանակ արձակ գրութիւններ արտադրելու, սու-
ղերը փոխանակ քով քովի գրելու, տակէ տակ կր գրեն ու
կր յանգաւորեն ծայրերը. ասոնցմէ ճշմարիտ բանաստեղծու-
թիւնը այնքան հեռու է որքան հեռի է Բէր Լաշէզը Պալըք-
լըն : Պատահած է ինձի ալ բոնուիլ ակամայ այդ վերքու-
տիտի :

Կոչկակարները ստնաման կը շինեն, իսկ անկարները՝ գործ
ըրած են ստանաւոր, թէեւ աւելի խելացի պիտի ըլլային
եթէ շինածնին ստանաւոր ըլլալուն ձեռնոցաւոր ըլլար :

Եթէ յանցանքը գործած եմ կեանքիս մէջ շատ քիչ ստա-
նաւորներ գրելու, թո՛ղ բարեկամներս սերտամիտ աչքով
նային ինձի և բրածս նկատեն իբրև *vice rédhibitoire* մը և
ապահով թող ըլլան որ այսուհետեւ այդ յանցանքը չպիտի
գործեմ, որովհետեւ ուխտս ըրած եմ չընել երկու քան, եթէ
Աստուծոյ սպասուիթեամբս այս յամառ և յիմար հիւանդու-
թեան և փրկուիմ և նորէն մտնեմ ընկերութեան մէջ որով
դուրս մնացած եմ հինգ սարիներէ ի վեր :

Այդ ուխտերս են՝ Ա. Ստանաւոր չի գրել և Բ. Աչք չի
անկիլ ուրիշի կնկան :

Ընթերցողներս սիրար չի նեղացնելու համար միմիայն
երկու ստանաւորներ, յիշատակներու և մի կրանոց-գօրակէն
դուրս պիտի հանեմ գծնուք, իրենց հրահանելու համար :

Մարդս երկու բաներ շատ կր սիրէ, նախ գրամը, և յետո
իւր գրակառն սպառարը, առաջինը կը ջանայ պահել և երկրորդը
քշել :

Ա.

ՄՏԵՐԻՄ ԽՕՍԲԵՐ ԼՈՒՍՆԻՆ

Առ ՆԷ

Հարկաւ գիտեա, ինչո՞ւ համար ինչ կը սիրե նաւաստին,
 Առնան Սեղիկաբոյ, Քարիչ Մեկու, օ՛հ, մի՛ խաղիւր եւ սաղիւ,
 Սիրահարներ որ չեն քաշուիր, այժի՞ց սուղեւ եւ անվախ,
 Քայիկներու հետ կը խառնեն, իրենց սրտին արին ու վա՛խ-:

Բայց թե ինչո՞ւ, աղուոր լուսին, ինչի համար ունիւմ սիր,
 Կ'ուզե՞ս գիտեալ, բայց կ'աղայեմ, թնաւ մարդու բան մ'ըսեր.
 Ինչ կը սիրեմ, որովհետեւ իմ մէկ հասիկ սիրունիս,
 Չե՛ր թե ան ինչ, այլ դուն անոր կ'անանիս:

Ասկից ի զա՞տ երախտագիտ պաշտամունք մը ինչ համար,
 Կարծես ունիւմ, երբ դու փայլիս՝ յերկնից կապոյտն ի կամար-
 Եւ պանկերու ժամը հնչե, — թող չի դալի քիւրիւրի,
 Քանի որ կաս, սենեակիս մէջ ո՛չ մտն կ'ուզե ոչ քիւրիւրի:

1895

Բ.

ԴԵՌԱՓԹԻԹ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ (*)

— Քրիստոս յարեա՞ւ, կ'ըսես իրար Հայն ու Յոյն,
 Արշալոյսիկն այսերունս պէս վարդազոյն,

(*) Զատիկի մը առթիւ Տիկին Ալիսիար՝ իր մէկ մտերիմ բարեկամուհեան երեք արեւելեան փոքրիկ աղջկան տուի մը շարքաւ դրկած ըզգալով, ես այդ հաւկեմածու տուիկն մէջ դրած էի այս ոտանաւորը:

Զասկի հաւկիթ, մեջը յեցուն շափարով,
Մեր որկածը նուէր մը չէ, այլ գորով:

Թո՛ղ խորնկեսայ այս շափարը Արշալոյս,
Դեռափթիթ վարդի կոկոն, հագիւ կոյս.
Որ հրեշտակներ ունի շնկեր, առէն կոյս,
Եւ դեռ չունի կեանքի վրայ տարակոյս =

Սիրուն մանկիկ, պռապիկի պէս անկեան
Խերը տեսնեն անոր հայրիկն ու մարնան.
Օրին մեկը երբ մեկն մեկնիկն աշխարհիէն,
Ուրիշ բանի չենք ապատեր, ապաքէն:

Մեկն կ'ուզենք որ զմեզ յիշէ Արշալոյս,
Ներեղի չէ՞ արդեօք սածել այսփան յոյս,
Թո՛ղ աղօթէ մեզի հարեար առ Աստուած,
Որ չի մեռնիկն, գիւնը նոր հարս չի տեսած:

Զասիկ, 1914

* * *

Իրական եւ ապրուած կեանքին մէջ անանկ անհաւատալի իրադարձութիւններ կան զորս չի կրնար երեւակայել, նոյն իսկ ամէնէն ճոխ երեւակայութիւն և բեղուն միտք ունեցող գրողէտք: Այս ըսածիս իբրև ապացոյց մէկ միլիոն օրինակներ կրնայի մէջ բերել, բայց չեմ ընել, ո՛չ դիւ և ոչալ ընթերցողներս ձանձրոյթով չյագնեցնելու համար:

Բայց հոս՝ Հիւանդանոց գանուած օրէս ի վեր հասի մը ահանատիւ վկան եւմ զոր միւսներուն քովը չեմ կրնար թողուլ:

Մեծահարուստ տիկնոջ մը պառաւ մօրաքոյրը հոս ապաստանած է անտէր ևւ անմխիթար, եղկելի վիճակի մը մէջ օրուան տիրապետող տխուր պարագաներու բերմամբ շատ

անգամներ խեղճ հիւանդ պառաւր պատառ մը բան չունենար
ուտելիք և երբ մենք, տիկինս և ես, բացառիկ պարագանե-
րու մէջ համեղ բան մը կ'ունենանք ակռայի տակ դնելիք,
անպատճառ բաժին կը հանենք այդ տարաբաղդ կնկան:

Մինչդեռ անդին, վերոյիշեալ մեծահարուստ այրին, ու-
մէն դիչեր տանը մէջ, բօքէրի սեղան մը ունի բայ, որուն
վրայ 20էն 30 ոսկի կը կորսնցնէ յաճախ:

Կերեւայ թէ Աստուած աւելի կարեւոր բաներով զբա-
ղած ըլլալուն, ասանկ թեթև մարդկային յանցանքները չի
տեսներ:

*

* *

Այն ընթացքով որ կ'երթանք, հեռու չէ այն օրը ուր
պիտի տեսնենք թէ եկեղեցականութիւնը կիներու տրուած
պիտի ըլլայ:

Առաջ մենք քահանայ կ'ըլլայինք, անոնք պիտի ըլլան
շահախոս:

Մինչև հիմա մենք կը պաշտէինք զիրենք, այսուհետև
անոնք զմեզ պիտի պաշտեն:

Քահանաներուն վրայէն խուճկի հոտ կուգար, մահանա-
ները պիտի բուրեն օ բօքանախ և ֆիս մի ֆուխ:

*

* *

Վշտահարի մը պղատոնական կերպով տրուած մխիթա-
րանքը այն ազդեցութիւնը կ'ընէ վրան ինչ որ կ'ընէ ճիճակը
(spadrap) վէրքին. իրաւ, կը չորցնէ վրայի կեղեւը, բայց
վէրքը տակէն կը բանի:

*

* *

Գրելը եւ կարդալը այն ազդեցութիւնը կ'ընեն վրաս,
ինչ որ կ'ընեն ոգելից ըմպելիները ուրիշներուն: Երբ գրելու
կը զբաղիմ, կը մոռնամ ես զիս և ոչ մամանակ եւ ոչ ալ մի-
ջոյ կը գտնեմ ինքզինքիս, վիշտերուս եւ տառապանքներուս
վրայ խորհելու:

Գրիչը եւ գիրքը իմ լաւագոյն դեղերս են:

*

* *

Ի՞նչ է հիւանդանոցը:

— Գերեզմանատան *salle d'attente* (սպասման սրահ):

*

* *

Բժիշկէ մը աւելի ձեռնհասութեամբ կը դարմանեն հիւ-
ւանդ մը՝ ժամանակը և համբերութիւնը :

Կիւլյոն արքան ըսած է. «Բժոխքը կնկան լեզուներով
սալայատակուած է» :

Ասկէ հետեւցնելու չէ սակայն որ այդ եկեղեցականը
երկինք դացած էր aller-retour տամակով :

Ուրիշ եկեղեցական մը՝ Հայր Պուլիէ, տեղ մը ըսած է .

Կինը՝ պչրասէր է, յողդողդ, պարծենկոտ, յանձնապաս-
տան, ծոյլ, ստախօս, քինախնդիր, կամակոր, յամառ, կեղ-
ծաւոր, վատասիրտ, շատախօս, չարլեզու, չարսիրտ, բար-
կասիրտ, նենգամիտ, ոխակալ, փափկակեր, անխոհեմ եւ
որկրամոլ :

Կ'երեւայ թէ Հայր Պուլիէ մայր չէ ունեցած . մայր ու-
նեցողը պէտք չէ որ տեսնայ իգական սեռին պակասութիւն-
ները և կամ յանձանքները :

Կիները դեւեր են, ըսած է ուրիշ մըն ալ, որ զմեզ
դժոխք կը մտցնեն արքայութեան դռնէն :


Կիները, ըսած է Ինօսան Ք. Պապը, հրեշտակները ան-
գամ գլխէ կը հանեն :

Ուրիշ տեղ մըն ալ կարդացած եմ, բայց չեմ յիշեր հե-
ղինակին ո՛վ ըլլալը : Կինը՝ քարբի մը հեռը ունի և վիշտալի
մը չարութիւնը : Ամէնէն խելօք մարդը խենթ կը կարի կի-
ներուն հետ :



ՄԱՐՍԷԼ ԲՐԷՎՕԷՆ

ԽՈՐՀՈՂՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ



Խնդիրը այդքան լուրջ է եղեր, ո՛վ իմ մեծամուկն բարեկամս :

Ըսել է, մեր խօսքին հաւատ ընծայեցիք, երբ որ մը ամառուան բաժանուկէն առաջ Բրէ-Վալթրլանի(*) մէջ ձեր վրայ հիացող քանի մը կիներ եւ ես, մեր ամուսիններուն և ձեզ հետ ճաշած ատեննիս, ձեզի խօսք կուտայինք ամէն մէկերնիս, դատ դատ, գրի առնել մեր աղջկնութեան առաջին սիրոյն պատմութիւնը :

Մենք՝ ամէնքս ալ խելքերնիս գլուխնիս կիներ ենք, ամուսնոյ սիրոյթին սակ, և շատերնիս դաւկի մայրեր : Տուած խօսքերնիս բոնել շատ վտանգաւոր բան է. բայց ի՛նչ փոյթ :

Մեր խօսք տուած աւերնը մեր էրիկները ներկայ էին եւ դէմ չի կեցան և նոյն իսկ իրենք ղիրենք փաղաքշուած կարծեցին, երբ ըսին թէ «Այդ ամէնով հեշտաբոյր հատոր մը պիտի յօրինեմ :» Այսպէս, ուրեմն մենք ալ աշխատակցած պիտի ըլլանք Perfidesի և Fausse Amoureuseի հեղինակին հետ, առ ի՛նչ պատիւ է մեզի համար, ի՛նչ վտանգ... բարեբաղտարար, դուք աղնուաչնորհ մէկն էք և պիտի գիտնաք անանկ մը շպարաներկել մեր դէմքերը որ ձեր ընթերցողները չպիտի կրնան ճանչնալ մեր ինքնութիւնը : Եւ յե-

(*) Բարիզ՝ Պուա քը Պուլօնի մէջ շատ շիբ եւ մեծամասն ասղաւար—ճաշարան մը որ ժամադրաւայրն է մայրաքաղաքին բարձր աշխարհկուծեան պատկանող անձնաւորութիւններու եւ օտար պերճակեաց գրօսաշրջիկներու :

տոյ , գիրքը դուք էք որ պիտի ստորագրէք :
Ահա՛ կ'սկսիմ կոր :

Ճիշդ տասներեք տարի կ'ընէ որ առաջին անգամ ըլլալով մէկու մը սիրահարեցայ , նա՛ , լուրջ սիրահարութիւն մը : Տասնուչորս տարու էի այն ատենը : Այս թուանշաններէն օղտուկեցէք արդի տարիքս գանալու համար : Երեք տարիէն այլևս զայն ձեզ չսլիտի կրնամ ըսել :

Պօտրմօն անուն գիշերօթիկ վարժարանի մը մէջ աշակերտուհի էի ի Վերսայի : Ծերուկ ժօրեղբայրս՝ Բրիմա տը Վէրշէու (ան՝ զոր կը ճանչնար) իր վերջին տարիները խիստ մանրակրկիտ ինքնամոլութիւնով մը կազմակերպած ըլլալուն , ինծի նման կրկնապէս որբացած աղջիկ մը չէր ուզեր քովը պահել : Արդէն , ես ինքս ալ շատ չէի ախորժեր արձակուրդներու ատենն անգամ , Քասէթ փողոցին այդ տխրաշուք ապարանքէն : Մինչդեռ ընդհակառակը , խիստ հաճելի յիշատակներ պահած եմ Պօտրմօն վարժարանէն : Լուգովիկոս ԺԶ-ի սճով կառուցուած հնամենի շէնք մըն էր անիկա , ընդարձակ պարտէզ մը , սակաւաթիւ ընկերուհիներ՝ երեսուհի չափ , որոնց մէջ շատ մը օտարականներ (մեծ մասամբ՝ Հարաւային Ամերիկայէ) , աղուոր , օղտուն սենեակներ , ընտանեկան ճաշասեղան , ճոխ բարեկեցութեան և ախորժելի ընկերակցութեան միջնուորտ մը : Մտաւորական ոչ մէկ տաժանք , ո՛հ ոչ , (միտք չունէինք գրոց-բրոցներ ըլլալու , ինչպէս կ'ըսեն զպրօցականի ծածկակեզուով) բայց ստոր փոխարէն՝ բազմազան ուսուցում մը , կարելի եղածին չափ ողորկ , արդիական ձգտում մը դէպի «իրազեկութիւն» , մէկ բառով կատարելութիւնը . . . քիչիկ մը վիպականութիւնով խառն :

Տիկին Պօտրմօն որ դպրոցական այս հաստատութիւնը կը վարէր և մեծ ժրաջանութեամբ կը գրադէր անով , երթտասարդութեանը , սիրային պարկեշտ տուամ մը ունեցած էր եւ որուն դրոշմը պահած էր իր կեանքը համակ : Քսաներկու տարեկանին , դեռ նոր ելած դպրոցէն , ամուսնացած էր նշանածի մը հետ որուն թոքախտաւոր ըլլալը գիտէր և որ իրօք մեռած էր կարգուելէն քանի մը ամիս ետքը :

Իրեն քով աշակերտած ատենս , երեսունեւիկն ասրու մը ըլլալու էր : Ժամանակը մաշեցուցած էր իր արդարացի թախիժը , իրեն ձգելով միայն ընդհանուր տրամադրութիւն մը դէպի փափկազգացիկ յոյզերը , դէպի եղերգը և դէպի կամահաճ արտասուքները : Այդ հակումներուն տարօրինակ պէս կը հակասէր իր Ֆիզիքական կերտուածքը : Շատ զարմանալի կը թուէր մեզի թէ արիւնոտ կազմով՝ այդ գիրուկ թխադոյն կինը որուն վերի շրթունքը սեւ աղուամազ մը կօմարակէր , — բաց ըսենք , պիտաւոր այդ կինը կարենար ունենալ՝ Օֆէլիայի հանգոյն շարժուձեւեր , խօսելակերպ մը եւ զգացումներ :

Տիկին Պօտրմօն ոտանաւորներ կը գրէր : Տիկին Պօտրմօն արժանացած էր Ֆրանսական Ակադեմիայի մրցանակին , ինչ որ՝ մեր աչքին՝ զինքը կը պճնէր կախարդանքով մը որ նոյն չափ պայծառադեղ էր , որքան իր զգացական արկածը : Ամէնքս ալ գիտէինք իր ամուսնութեան պատմութիւնը :

Պօտրմօն վարժարանին մէջ արտօնեալ էինք մեր գրականներուն մէջ պահելու համօրէն Արտօսրները պսակաւորուած հատորը , դայն կարդալու համար խոկումով , հեղինակի անմեղադրելի անափառութիւն ասիկա : Մինակ սա կար որ Տիկին Պօտրմօնի գրական արցունքները՝ երջանիկ սիրոյ եւ անյուսութեան արցունքներ էին փոփոխ ի փոխ : Աշակերտուհիները գլխաւորապէս սիրոյ արցունքներէն համ կ'առնէին , կարճ կ'ապելու համար , Պօտրմօն վարժարանին մէջ շնչածնիս չափազանց զգայնարորդութիւն ունէր , վիպականութիւնով սրուած : Այս ամէնը սակայն , հարկ է ըսել , պատշաճութեան սահմաններուն մէջ եւ կու սուղեղ անբժուկեամբ :

Ձեր Կստօրի խօսակցութիւններուն մէջն է որ , պարոններ , աղջկանց վարժարանները կը նմանին մանչերու զըպրոցներուն :

Տիկին Պօտրմօնի աշակերտուհիներուն մէջէն , ես չէի ամէնէն նուազ վիպական եղողը , աւանդ , ես չէի ճանչցած մօր մը խանդաղատանքը , ոչ ոք մուծակած եւ կամ հրահանգած էր սիրտս : Եւ յետոյ , ի՞նչ էր եղածը : Ես որ՝ դիւրաւ կը կարծեն թէ դորձնական եւ անձիս տէր մէկն եմ , ես

ալ, ուրիշ ու է մէկու մը պէս, կապոյտ ծաղիկներու անդաստան մը ունիմ խորը հողույս զոր իրաւ, կեանքը քիչ մը քշտած և խամրեցուցած է: Բայց տասնեւչորս տարեկանիս, մեծանուն բարեկամս, ի՛նչ փթիթք, ի՛նչ կապուտակութիւն էր ան: Ես կը կարծեմ թէ fleur bleue ըսուածը ես էի, աւելի քան իմ լաւագոյն երկու բարեկամուհիներս՝ Մարթեւ Խարիքլիա որոնք սակայն քիչ մը քիչ «ամսեղուք» աղջիկներ չէին: Մարթ՝ Պրըթանիացի պատուական ընտանիքի մը պատկանող, քիչ մը չափազանց քնքուշ, բայց հրապուրիչ կազմածքով և շնորհալի դէմքով աղջնակ մըն էր: Խարիքլիա՝ յոյն սեղանաւորի մը աղջիկը՝ զինքը տեսնողներուն մտքին մէջ կը յարուցանէր Թանակրացի արձանիկի մը պարզունակ գաղափարը: Երկուքն ալ հազիւ ինչ քիչ մը աւելի տարեց, գրեթէ տասնեւեց տարու: Մերածան էինք իրարմէ եւ երեքս ալ դոյ գիտէինք «Համօրէն Արտօսրներ»ու հրաբորբօք էջերը: Եւ սքանչելապէս յափշտակուած էինք սիրային ամէնէն աւելի գեղեցիկ, ամէնէն աւելի վսեմ, ամէնէն աւելի անսպակ արկածներէ . . .

Ի նպաստ որո՞ւ:

Խաչոր, պարոն մեծ հողերան, ի նպաստ ոչ ոքիս Արձակուրդի ամիսներու զարմկութիւնները (cousinage) յետին ստտիճանի անհամ կը թուէին մեզի «Համօրէն Արտօսրներ»ու պէս դրքի մը մէջ մեր հանապազօրեայ զգայնիկ ճարակը գանելէ վերջ չէր որ պիտի գիժանէինք ծովափի եւ կամ թեմիսի Քլիրթներով կշտանայ: Զմեզ դրդուելու և մեր զգացումները սոք հանելու համար խիստ սարբեր բան մը անհրաժեշտ էր, ստուգիւ: Մեզի պէտք եղածը երազանքն էր, տրիփը, տուայտանքը և մանաւանդ մտքէ չանցածը, անսպասելին և դուցէ անկարելին: Ըսի արդէն որ մենք՝ երեքս ալ յիմարներ էինք, բայց ստով մէկտեղ փոքրիկ կղաքիմներու երրորդութիւն մը, հաւատացէ՛ք խօսքիս:

*
* * *

Դպրոցական երեք վերամուտներուն — Կաղանդ, Զատիկ, Մեծ Արձակուրդ: Եսիս և առաջ հարցումներու խաչապատ մը (chacé-croisé) տեղի կ'ունենար Պրըթի, Խարիքլիայի և

աղախնոյդ միջև : Ի՞նչ էինք ըրած , գլուխնուս ի՞նչ էր եկած : Հանդիպած էինք անոր : Աւանդ սակայն , մէկզմէկ եւ մենք զմեզ յուսադրելու համար մեր ըրած քանի մը փորձերէն ետք համաձայնօրէն կը հաստատէինք թէ ան՝ դէմերնիս չէր ելած և թէ զպրոց կը վերադառնայինք սրտերնիս դատարկ : Նոյն բանը պատահեցաւ նորէն Հոկտեմբերի մեր վերջին վերամուտին որ զմեզ քով քովի բերաւ Պօտրմօն վարժարանի պարտէզին մէջ : Մեր երեք սրտերը դատարկութեան մէջ բարախած էին ի դուր : Կը սիրէինք միշտ . . . սիրել : Եւ երեքս մէկ նստանք լացինք , (Համօրէն Արտօսրները) , մենք զմեզ դատելով՝ վերջնականապէս մէկ կողմ դրուած , զգայնիկ յայլքէ , բացի անորմէ զոր գրականութիւնը կուտայ :

Մեր անյուսութիւնը երկար չպիտի քչէր . վերամուտէն տակաւին ամիս մը չէր անցած , ըստ սովորականին դասաւանդութիւնները վերսկսելնուն , մենէ ամէն մէկը , ոչ առանց մեծամտութեան , խորհրդաւոր գաղտնիք մը ունեցողի կերպարանք մը ցոյց կուտար միւս երկուքին դիմաց : Ամէն մէկը իր գաղտնիքը ունէր : Ամէն մէկերնիս անով կը պարծենայինք մեր ընկերուհիներուն քով : Ամէն մէկերնիս կը յաւակնէինք կարծել թէ անթափանցելի էր մեր գաղտնիքը . ամէն մէկերնիս երբեք մ կ'ընէր որ այդ գաղտնիքը հետը գերեզման պիտի տանէր : Առտու մը սակայն , երեք խոստովանութիւնները միեւնոյն պահուն դուրս բխեցան և համոզում դոյսացուցինք թէ երեքս ալ խենթի պէս սիրահարած էինք միեւնոյն մարդուն՝ Պ . Ֆէնտան Տօթսէի : Ո՞վ էր ուրեմն այդ Ֆէնտանը , խորհողութեան մեր ուսուցիչը , այսպէս մեզի նշանակած էր դայն Տիկին Պօտրմօն վերամուտին յաջորդ օրը երբ դայն ներկայացուց աշակերտութեան չ «Պարհողութեան ուսուցիչը , բոստ էր Տիկին Պօտրմօն , որ վայելչարանութեան հողի կուտար : Մարդը՝ փիլիսոփայութեան մեր վարժապետն էր , պարզ բանք : Հիմա տանելովեցին եւ տանելութիւն մէջտեղուանքը դանուտղ դեռաափ աղջիկներուն ալ , փիլիսոփայութեան դասեր կուտանկոր ճիշդ ինչպէս դայն կ'ուսուցանեն աղամարդոց , եւ ես կը կարծեմ թէ այդ ուսուցման աղդուութիւնը միեւնոյնն է երկու սեռին համար ալ :

Պ. Ֆէռնան Տօթրէ երեսունին կը մօտենար կոր. փիլի-
սոփայութեան ուսուցչապետ և տօքթօրի աստիճանը առած
«Պայծառ խղճմտանք»ի վրայ գրած իր թեզին համար: Բանա-
ստեղծութիւններ ալ կը գրէր զոր քիչ անգամ կը հրատարա-
կէր, հատուած մը հոս, հատուած մը հոն, երիտասարդներու
համար, հրատարակուած գրական հանդէսներու մէջ ևւ զորս
Տիկին Պօարմօն մեզի կը հաղորդէր ձեռքովը զանոնք լնդօ-
րինակելէ վերջ: Այդ բանաստեղծութիւնները այնքան խո-
րախորհուրդ էին որ, հաստատ չէինք զանոնք հասկցած ըլ-
լալնուս: Ասոր համար եւս առաւել կը հիանայինք վրան,
ինչպէս կը հիանայինք Ֆէռնանին վրայ որ բաւական դժուար-
իմաց էին պզտիկ աղջիկներու համար: Ըստ ինքեան, ինչ որ
մեզ կը հիացնէր Ֆէռնան Տօթրէի դասերուն, գիրքերուն եւ
ոտանաւորներուն մէջ, նոյնինքն Ֆէռնան Տօթրէն էր: Իրա՛ւ
աղուոր մանչ է, երբեմն կը հարցնէր անձկանօք, մեր երեքէն
մէկը միւս երկուքին, միւս երկուքին բացազանչելը լսելու
հաճոյքին համար: Կարելի՞ էր միթէ կասկածի տակ դնել
խորհողութեան ուսուցչին գեղեցկութիւնը: Երեսին վրայ
կանոնաւոր ոչինչ, անշուշտ, ո՛չ անճոռնի եւ ոչ ալ գեղեցիկ
բան մը, աւերած եւ ցասկոտ դէմք մը, սայրասուր դիմա-
գիծեր, ածուխի պէս հրացայտ պզտիկ աչքեր, ահագին ճա-
կատ մը, խիստ շատ սև փայլուն մազեր, բարձր ու նիհար
հասակ, հիանալիօրէն գեղեցիկ ձեռքեր, մօմի պէս թափ-
ուած, այսպէս էր Ֆէռնան Տօթրէ: Թանձրաշուրթն բերանը
կը բացուէր առողջ, անկանոն շարքով և ձիւնի պէս ճերմակ
ակռաներու վրայ: Նոյնիսկ այսօր որ, այդ ամէնուն վրայ ան-
խռով կերպով կը մտածեմ և կամ աւելի լաւ ևս է ըսել մե-
լամաղձոտութեամբ և ուրախութեան խառնուրդով մը ըս-
տիպեալ եմ խոստովանելու թէ այդ մարդը՝ տպաւորիչ Ֆի-
զիքականով մը օժտուած էր: Հարաւարնակի դիւրարարա-
րութիւն մը (bagou) անսակ պարբերութիւններ կը գործածէր
որ կարծես պիրկ չուանին վրայ ոստում մը կը կատարէին և
որ սակայն անխուսափելիօրէն ոտքերնուն վրայ կ'իյնային
նորէն: Եւ ձայն մը, շարժուձեւեր, միմախաղեր եւ երես մը,
նա՛, ահաւասիկ անոր վրայ այնպէս մը կը խօսիմ կոր, ինչ-
պէս կը խօսէինք Մարթ, Սարիքլիա եւ Լու:

Վիպային այս սիրահարութեան այս քանի մը շարաթնե-
րը , քանի մը շարաթ միայն , սլահիկէ մը պիտի հասկնաք թէ
ինչո՛ւ , գոնէ մեր երեքին վրայ ունեցան սա բարերաստիկ
արդիւնքը որ վիլլիստիայութեան դասերուն հետեող ան-
հման աշակերտուհիներ եղանք , իրարու հետ եռանդի մըր-
ցում մը բացած էինք , ասիկա զարմանալի թուի . նախանձը
զմեզ չէր շարչրկեր :

Ամէն մէկերնուս շատ բնական կը թուէր որ իր երկու
բարեկամուհիները պաշտէին անզուգական Ֆէռնանը : Նոյն-
քան բնական կ'երևար մեզի որ Ֆէռնան նախասիրութիւն ցոյց
տար մեր երրախումբին և իրաւ ալ ատանկ կ'ընէր , իր երեք
լաւագոյն աշակերտուհիները մենք չէինք միթէ , բայց ա-
ռանց մասնաւորապէս աչք ունենալու մեր երեքէն մէկին ,
կարծես հասկցած էր մեր երրեակ մեծարանքը զոր կը տածէր
առանց զայն կոտորակել ուղելու : Արդէն՝ իր բարեկրթու-
թիւնը կատարեալ էր . անժպիտ քաղաքավարութեամբ մը կը
վարուէր , երբեմն ալ բարեկիրթ խստութեամբ որմէ զերծ չէր
մնար նոյն ինքն Տիկին Պօտրմոն : Անոր ինչպէս նաև մեզի
ուղղեալ մարդավարի , բայց անխնայ կերպով շեշտուած խօս-
քերուն ընդմէջէն կարծես ըսել կ'ուզէր . «Տկարամիտ արա-
րածներ ձեզի , հոս՝ աիրող մէկը կայ միայն , ան ալ ես եմ» :
Եւ Տիկին Պօտրմոն հոն տեղուանքը չէր ըլլար , ձայն չէր հա-
ներ , խորհողութեան ուսուցչին ներկայութեանը իր ամբողջ
հեղինակութիւնը կը կքէր խելոյն , ոչ մէկերնիս իրմէ աւելի
հնազանդ էր վարժապետին , ինչ որ հիացումով կը լեցնէր
զմեզ հանդէպ այդ նուաճող երիտասարդին :

Մանկամարդ աղջիկներու առաջին սիրոյն մէջ՝ միշտ շատ
մը ծաղրաշարժ բաներ կան , բայց չի կարծէք թէ ատ ատանկ
ըլլալը իրենք չեն գիտեր . տասնեհինգ տարու աղջիկները ա-
մէն բանի վրայ կը խնդան , ինչպէս նաև իրենք իրենց վրայ
ի հարկին . Մարթ , Սարիքլիա և ես , վայրկեաններ կային ,
ուր գիտէինք թէ ըրածնիս բախուկի դործ էր և մեր սաստ-
կազգած արիւիը դուրս չէր վաներ խօլական խնդալները՝
երբ՝ օրինակի համար կը նստէինք մեր «զանձ»ը կոչածին ցու-
ցակազրու թիւնը ընելու : Ֆէռնանի մասունքներն էին ստոնք :

Թուղթի քառակուսի կտոր մը որուն վրայ, օր մը, մեզ հարցաքննած ատենը անժոյժ գրչով մը կնկան մը կիսադէմը գծագրած էր: Ո՞վ էր այդ կինը: Մարթ և ևս կը յաւակնէինք կարծելու թէ մեր պատկերն էր ան. Պարիքլիս կը պնդէր թէ ատիկա աւելի շատ Տիկին Պօտրիօնի կը նմանէր: «Մենք ըսես, խնդալէ կը մարէինք. ատկէ զատ գանձը կը պարունակէր ձախ ձեռքի մոխրագոյն հին ձեռնոց մը, սեւ մազի չորս թել, չորս հատ ջղուտ կերպով մը խածխածուած մատիտ (Ֆէռնան իր մատիտներուն անբացատրելի անհետացման դէմ միշտ կը ճշգոհար): Ուրի՞շ, հա՛, իր մէկ կենդանագիրը դո՞ր կտրած էինք գրական պղտիկ Հանդէսի մը մէջէն ուր փիլիսոփայական քերթուածներ հրատարակած էր, թերթ մը ծծուն թուղթ որուն վրայի խառնափնդոր տողերը ի դուր կը ջանայինք քակելով կարդալ և հատ մըն ալ... չեմ կրնար ըսել թէ ի՞նչ էր մեր գանձին վերջին մասունքը... ատնական հագուստի տարր մը... էրիկ մարդու մէկ կտոր հագուստին վրայ՝ ատկէ քանի մը հատ կը գտնուի... Ստուգապէս խիստ յիմարական բան է, չպիտի ըսեմ»:

Երեքս ալ՝ բոլոր հոգիովնիս կը խնդայինք, երբ մեր գանձին վերաքննութիւնովը կը զբաղէինք զազտաչօղի: Ուրեմն, պիտի ըսէք մեզի, այդ մեր սիրահարութիւնը կարծուածին չօտի լուրջ բան մը չէր. ընդհակառակը, իմ մեծանուն բարեկամս, շատ լուրջ էր մեր սէրը, շո՛տ լուրջ: Իսկապէս, մեր երեքին ալ կեանքը նուիրած էինք Ֆէռնանի, իր վրայ կը մտածէինք, իր վրայ կը խօսէինք միայն. քիչ կը քնննայինք. ախորժակնիս ալ կտրուած էր. կը նիհարնայինք կոր և մէկդմէկու կ'ըսէինք թէ մեզ համար՝ կեանքը՝ ա՛յն ատեն միայն տանելի պիտի ըլլար՝ երբ մեզ յաւխտենապէս միացնէր Ֆէռնանի:

Բայց ինչպէ՞ս համեկու էր մեր փափաքին: Ես չպիտի պատմեմ ձեզի այ՞ բոլոր խենթ ու մենթ բաները զորս փոխն ի փոխ մաքերնուս կ'անցրնէինք: Մտաւ որական, աննհնգ սէր մը՝ մերը, բայց ճշմարիտ սէր: Այդ սէրը զմեզ կամայ կամայ կ'ուտէր կոր:

Ֆէռնան Տօթրէի հետ ամուսնանալ, ասով միայն կըր-

նայինք երջանիկ ըլլալ : Մինակ, չէինք կրնար երեքս միասին
անոր կիները ըլլալ : Եւ այս խնդրին լուծումը անգտանելի
կը թուէր մեզի :

= Ինծի մտիկ ըրէ՛ք , ըսաւ Խարիքլիա իրիկուն մը՝ ժամը
չորսի դբօսանքին , մտքէս բան մը կ'անցնի կոր :

— Ըսէ՛ , տեսնենք :

— Ֆէռնան մենէ մէկը կը սիրէ , ասիկա կասկած չի վեր-
ցըներ :

— Երեքս մէկանց կը սիրէ :

— Սէյո՛ , բայց մեր երեքէն մէկը կը նախադասէ անշուշտ :

Ուստի , նախ՝ այնքան շատ անուշատոհմն մէկն է որ չի
կրնար բացէ ի բաց ըսել թէ կը սիրէ զմեզ և ապա չի կրնար
ցոյց տալ իր նախասիրածը : Որոչ բան մը գիտնալու եւ յան-
գելու համար անոր , մէկ միջոց կայ մինակ , որն է՝ երթալ
ուղղակի այդ հարցումը դնել առջին :

Այս հիասքանչ առաջարկը անմիջապէս բնդունուեցաւ ,
երգում հանեցինք իրարու թէ , երկու ընկեցիկները պիտի
զսուէին բնարեւոյին սիրոյն , առանց տրտունջի : Չէ՞ մի որ
կարեւոր եղող բանը՝ Ֆէռնանը երջանկայնելն էր : Բայց միւս
կողմէ , համաձայնեցանք որ մեր երրախումբը չպիտի խզուէր
և թէ երկու ընկեցիկները բարեկամօհիները պիտի մնային
ընտրեւոյին և պիտի բնակէին անոր և Ֆէռնանի բնակած քա-
ղաքը : Վերջապէս , հազար ուրիշ տղայական և անմեղուկ
կերպով վիպային բաներ : Երեք կղաքիսեր , չէի՞ ըսած ձեզի :
Կղաքիսը անբիծ , անտրտա փոքրիկ կենդանի մրն է , դիւրա-
բարբաք և քչիկ մըն ալ անմիտ :

Այս ծանրակշիռ որոշումը տալէ վերջ , մտքէ իսկ անցը-
նելու չէր որ ատանկ փափուկ բանակցութիւն մը՝ կատարել
կարելի ըլլար դպրոցին մէջն իսկ : Հազիւ կարելի էր , մենէ
ո և է մէկուն համար , ան ալ , հազուադէպ պարագաներու
մէջ , հիսկ վայրկեանէ տուելի խօսակցութիւն մը ունենալ
Ֆէռնանի հետ եւ ատ ալ պէտք էր որ դպրոցական նիւթի
մը շուրջը դառնար , եւ Տիկին Պատրմօն միշտ ներկայ կ'ըլ-
լար այդ խօսակցութիւններուն և որ չի հանդուրժող աչքով
մը կը հսկէր անոնց վրայ եւ կը ջանար համառօտել զանոնք :

Կրնայինք գրել իրեն, բայց ատ ալ անդիւր և վտանգաւոր
բան էր : Մեր հաւանութիւնը տուինք սրվոր թէ՛ ամէնէն
պարզը, ամէնէն վայելը, ամէնէն պատուաւորը՝ մէկերնուս
ուղղակի երթալ զինքը գտնելն էր իր տունը, 43, Մօնօ փո-
ղոց, հինգերրորդ յարկ — իր հասցէն ծանօթ էր մեզի — և
իրեն հաղորդելն էր մէջերնիս ծրագրած որոշումը :

Մենէ մէկը, ո՛վ սակայն : Ամէն մէկերնիս կը վախնար
և կը փափաքէր բանազնացի այդ պաշտօնը ընդունելու :
Մէջերնիս վիճակ ձգեցինք ևս վիճակը ինձի ելաւ : Այդ վայր
կեանէն իսկ, երկու մեղսակիցներուս հետ համախորհուրդ,
բռնելիք ճամբաս ծրագրեցի :

Ահա՛ թէ ինչ վճռեցինք :

Ինչ որ պիտի ընէի՝ ընէի. «խորհողութեան ուսուցիչ»էն
Պէրկսօնի մէկ գիրքը փոխ պիտի առնէի : Տարեգլխի արձա-
կուրդները կ'մօտենային և զանոնք պիտի անցընէի, ըստ սովո-
րականին, իմ ծերուկ մօրեղբորս ևս խնամակալիս՝ Բախմոտ տը
Վէրթէռի՝ Քասէթ փողոցի տխրաշուք ապարանքին մէջ, ընդ
հակողութեամբ սենեկապանուհիի մը : Շատ գիւրին պիտի ըլ-
լար ինձի համար, այդ կնկան ընկերակցութեամբ երթալ,
Մօնօ փողոցի 43 թիւը, առանց իսկ ծածկելու թէ փոխ ա-
ռած Պէրկսօնս ևս կը տանէի փիլիսոփայութեան վարժապե-
տիս : Սենեկապանուհին վարը, կառքին մէջ պիտի ձգէի ևս
մինակս վեր պիտի ելլէի մէռնանը դիմադրաւելու :

— Եթէ զինքը տունը չի գտնես, կ'առարկէր Մարթ :

— Պէրկսօնը ևս պիտի տանիմ և յաջորդ օրը պիտի վե-
րադառնամ :

Չեմ կարծեր թէ երբեք այդքան տենդագին կերպով
սպասած ըլլամ տարեգլխին : Հասաւ այդ օրը միւսներուն
պէս կանոնաւոր քայլերով որոնց ընթացքը միշտ պիտի քրն-
նադատեն մարդիկ և զորս կամ շատ գանդաղկոտ կը գտնեն
և կամ շատ նրսդահաս : Չեղի պէս նրբազիտակ մարդու մը
չէ որ, մեծահոշակ բարեկամս իմին, պիտի փորձէի նկարա-
գրել մեր երեք փանաքի հողիներու վիճակը, այդ մամանու-
կամիջոցին տեւողութեանը, Յոյսեր, նքողումներ, երկբա-
յութիւններ, պղտիկ խղճահարութիւններ, ո՛վ դուք վեր-

լուծեցէք մեր յոյզերը : Ես՝ երկու բարեկամուհիներէս աւելի
իրաւունք ունէի վրդովուելու , դուք ալ կը խոստովանիք ,
չէ : Եւ իրաւ ալ շատ խռովեալ էր հողիս , բայց այս ծան-
րակշիռ մտահողութիւնները արդեւք չէին որ մերթ ընդ մերթ
քրքիչի անզսպելի նոսրաներ չգային , չցնցէին մեր երրա-
խումբը . ինչի՞ վրայ կը խնդայինք , մեր վրայ անտարակոյս ,
եւ թերեւս քչիկ մըն ալ մէռնանի : Որքան իրաւունք երբ
գլխալի կը դնէք աղջիկները՝ իրենց տարամերժ ըսուած տա-
րիքնուն մէջ :

Անմիջապէս եկէք հասնինք մեծ օրուան . եթէ կ'ուզէք ,
այն օրուան ուր արձակուրդներու միջոցին , մօրեղբորս կողմէ
տրամադրութեանս տակ դրուած կիսակառքը (coupé) Քասէթ
փողոցէն Մօնթ փողոց տարաւ Պէրկսօնի հասոր մը՝ Օրիորդ
Իվօնն ար Պուաղէօլի եւ անոր սենեկապանուհիին մէջտեղ :
Քասէթ փողոցէն մինչեւ Մօնթ ձամբան շատ երկայն չէ . բայց
քիչ մը օդ առնելու համար կառքը տանիլ տուի Լուվրի
կողմէն , ուր դնումներ ունէի ընելիք : Եւ ժամը երկուքին
ատենները միայն հասանք Մօնթ փողոցը :

Իեկտեմբերի չոր ու ամպամած օր մըն էր եւ բնաւ ջուրտ
չի կար : Աչքերնուդ առջեւ բերէիք , սիրելի բարեկամս . երկայն
բարակ սրիս-նարին գոյն շրջաղգեստ մը հագած , սփռնկս մուշ-
տակէ եթօ՞ մը եւ միեւնոյն մուշտակէն թօփ մը գլխուն վրայ
կրող աղջիկ մը այդ աղատ թաղին փանաքի տուներէն մէ-
կուն հինգ յարկերէն մաղլցելով կ'ելլէ վեր , գիրք մը թւին
տակ , անրկա ձեր աղախինը Իվօնն է տանեւչորս տարու ,
որ կ'երթայ արձակ համարձակ իր խորհողութեան ուսուցչին
ձեռքը խնդրելու , իրեն եւ կամ երկու անբաժաններէն մէ-
կուն համար : Երկու անբաժանները դիս Քասէթ փողոցը պի-
տի սպասէին թէյի ժամուն :

Ազատ համարձակ : Չի չափադանցինք , ճշմարտութիւնը
սա է որ սիրտս կը բարախէր , բայց ոչ արթնամտութիւնս
խափանելու ատիճան սաստիկ : Իսկապէս աշխարհիկ աղջիկ
մը , դուք ալ գիտէք ասիկա , երբեք խելքը կորսնցնելու աս-
տիճան չի քաշուիր էրիկ մարդու մը առջեւ : Եւ յետոյ , այն-
քան անգամ աչքիս առջեւ բերած էի սանդուղներէն այս վե-

րելքը, դրան զանգակին հնչիւնը բացուող դուռը: Դուռը հոն էր ահա, դիմացս, միաբացիկ անշուք դուռ մը: Զանգակը հնչեցուցի, բայց դուռը չի բացուեցաւ:

Դաստապրիկներու (vaesselles) գանչիւն մը և տեղափոխուող կարասիներու հանած աղմուկը ականջիս զարկին. Լուսթիւն մը, կանացի քայլեր, ուսուցչին սպասուհին, անկասկած: Վերջապէս դուռը կը բացուի, երկու երկվայրկեանի շրտումէ մը վերջ որ զիս կ'արդիլէ աչքերուս վիայութեանը հաւատալու, անմիջապէս կը ճտնչնամ... նոյն ինքն Տիկին Պօտրմօնը:

Տիկին Պօտրմօն իր վայելչածելու սև քայեհօրը հագած, ըստ սովորութեանը և մազերը միջտեղէն ձեղքով մը երկուողորկ ծամակալներու վրայ սանտրուած էին, ինչպէս միշտ, բայց վերջապէս՝ Տիկին Պօտրմօն առանց գլխարկի եւ առանց ձեռնոցներու և վրան բնաւ չի տեսայ «այցելութեան դացած»ի կերպարանք մը:

Ու երբ ինքն ալ այնքան շուարած էր զիս ճանչնալուն, որ բառ չի գտաւ արտասանելու — եւ երբ զիս մտցուց ընդարձակ սենեակէ մը ներս որ յայտնասպէս՝ իբրև գրասենեակ կը ծառայէր «մեք Ֆէռնան»ին, կէս մը բաց ձգուած դուռնէ մը աչքիս զարկաւ սեղան մը՝ կէս վերցուած, որուն վրայ սուրճի երկու գաւաթներ կեցած էին, գլուխ գլխի տուած, եթէ երբեք կարելի է այսպէս ըսել. Անբառբար այդ տեսարանէն ի վեր է որ իմ Ֆէռնանի սուենը մտնելս՝ Տիկին Պօտրմօնէն առաջնորդուած, որ վերահասու եղայ, մեծանուն բարեկամս, նկարագրիս էական մէկ դրոշմին: Անիտոռիքիւն, բացառիկ պատահարները, նեղացուցիչ և կամ վասնդաւոր, փոխանակ զիս զրկելու իմ գործունէութեան միջոցներէս դանոնք կը կծկէ, զանոնք շարժման մէջ կը դնէ և կը խթէ: Երբ փիլիսոփային գրասենեակին մէջ դէմ դիմաց նստեցայ վարժուհիիս հետ, ինքզինքս բաւակոնի պոյծառամիտ զգացի, զինքը լաւ մը վերէն վար դնելու համար: Եւ արդէն ներսիդիս խնդալու փոփաք մը ծայր կուտար. վասն զի Տիկին Պօտրմօն՝ ինքը՝ չէր կրցած ինքզինքին տէր մնալ և յանկարծօրէն լեզուն բացուելով, խենթ մենթ բաներ կ'ըսէր, ա՛լ

էր դադրեր խօսելէ և կարծես թէ չէր ուզեր մանաւանդ որ
ես ալ բերանս բանամ :

«Սիրելի աղջիկս , սիրելի աղջիկս , առ ի՛նչ անակնկալ է ,
ի՛նչ հաճելի անակնկալ , մտքէս անգամ չէի կրնար անցընել
թէ . . . Դուք ալ ձեր կողմէ դարմացած ըլլալու էք զիս հոս
տեսնելնուդ : Պ . Տօթրէ հոս չէ , հիմա դուրս ելաւ , ճիշդ
նախաճաշէն անմիջապէս ետքը : Սիրտը որքան պիտի նեղա-
նայ : Եւ ապահով եմ որ դուք ձեզի կը հարցնէք «ընտո՞ր կ'ըլ-
լայ որ Տիկին Պօտրմօնն է որ զիս կ'ընդունի : Ո՛ր , սիրելի
դաւակս , խնդիրը շատ սլարդ է . չէ՞ք գուշակեր կոր : Պ .
Տօթրէ ընտանիք չունի : Ես ալ , ուսմ'դ , այրիութիւնս ա՛լ ա-
ղաս թողուցած է զիս երկար ատենէ ի վեր (կարճատե յու-
ղում մը , թաշկինակ) : Ուստի , բայց կը գուշակէք կոր , չէ՞ ,
կը հասկնաք անշուշտ , Իվօնն , թէ ես պարոնի մը տանը մէջ
էի կրնար գտնուիլ . թէ ես՝ ինծի չպիտիներէի , ես որ՝ այս-
քան աղջիկներու կրթութիւնը վրաս առած եմ , միս մի՛նակս
անոր հետ ճաշել եթէ . . . ան ինծի համար չըլլար . . . վերջա-
պէս , վերջապէս (լռութիւն , գերագոյն յուղում , թաշկի-
նակ) , վերջապէս մէ՛ռնան եւ ես երկար ժամանակէ ի վեր
հաւնած էինք իրարու : Հիմա նշանուեցանք եւ երեք օրէն ,
վերամուտէն օր մը առաջ . . , ուրախութիւնը , անհուն ու-
րախութիւնը . . . իրարու միանալու . . . ամուսնանալու :

Ասոր վրայ , սկսաւ ողիկ ողիկ արցունք թափել , արդէն
թրջուած թաշկինակովը ծածկեց իր հրաշող դէմքը և հեկե-
կանքները , որ զինքը կը ցնցէին : Հիմա որ՝ կիանքի վրայ
քիչ շատ փորձառութիւն ունիմ , վայրկեան մը իսկ չեմ տա-
րակուսիր թէ Տիկին Պօտրմօն կրնար բողորովին անբասիր ըլ-
լալ և նշանածին տանը մէջ իր ըրած նախաճաշը կրնար շատ
բացատրելի բան մը եղած ըլլալ : Բայց մի՛ մոռնաք հուշակա-
ւոր բարեկամս իմին , թէ ես այս դրուագին վրայ կը նայէի
վայրագ և միւսնոյն ատեն ծաղրալից աչքով , աչքեր սրոնք
պատրանաթափութեան բերմամբ , թերեւս աւելի վայրագ եւ
աւելի ծաղրալից դարձած էին :

Այս մարմնեղ և պիտակեր կնկան զգացական վրդովումը
և ամօթխած արցունքները , իր անկապակից խօսքերը , իր

ներկայութիւնը ա՛յնպիսի տեղ մը որ սիրային խորհուրդի մը անբռնարարելի սրբաւայրը կը նկատէի ես, այս ամէնը ինծի ներշնչեցին խնդալու վառիաք մը և քիչ մըն ալ զգուանք :

* * *

Եւ ինչպէս որ, կիներու մէջ, երբ մանաւանդ գործին մէջ նախանձը քիթը կը խօթէ, դժուրակութիւնը, դաժանութիւնը սորվելու համար փորձառութեան դասերէն պէտք չեն ունենար, սա շատ պարզ պատասխանը տուի, առանց ո և է ակնարկութիւն ընելու Տիկին Պօտրմօնի ինծի հաղորդած կարեւոր և ծանրակշիռ բաներուն :

— Կա ինչըրեմ, Տիկին, հաճեցէք Պ. Տօթրէի յանձն Պէշկսօնի այս հաստը որ իրմէ փոխ առած էի ևւ իրեն վերադարձրելու համար եկած էի :

— Հա՛, ըստ, այնքան յանկարծակիի եկած որ՝ իր փափկազգայ յուզմունքը մէկէն ի մէկ կասեցաւ : Ուրիշ բան չունէիք իրեն ըսելիք, չէ՞

— Բացարձակապէս ոչ, Տիկին :

Ոտքի ելայ, նախասենեակէն անցայ, ևւ յետոյ ուղղուեցայ դէպի դուռը ևւ ստնդուղները՝ բաւական ևւ տանուչորս տարու աղջնակի մը վայել հպարտութեամբ ինքզինքս դուրս նետեցի :

* * *

Մեղք որ այս պահուս քովս չէք գտնուիր կոր, իմ մեծանուն բարեկամս, վայրկեան մը պիտի ընդհատեմ պատմութիւնս եւ պիտի ըսեմ ձեզի : Ինչպէ՞ս կ'երևակայէք Մարթի, Պարիքլիայի և իմ միջեւ տեղի ունեցած տեսարանը՝ Մօնթ փողոցի ըրած այցելութիւնս իրենց պատմելէս քանի մը ժամ ետքը : Հակառակ ձեր հոգեբանի սուր կորովամտութեան, ևս գրաւ կը դնեմ որ հազիւ պիտի կրնայիք ճշմարտութեան քովէն անցնիլ :

Ո՞ր զուարթութեան տեսարան մըն էր եղածը . . . Ա՛խ . . .

խօսլ զուարթութիւնը ինչ թանկագին առաձնաշնորհում որ մինակ դեռատի, շատ դեռատի աղջիկներուն տրուած է, այն օրէն ի վեր որ այլեւս աստուածներ չիկան Ողիմպոսի բարձանց վրայ, քանի քանի անգամներ զուր տեղը փնտռած եմ հոմերեան այդ քրքիչը որ այնքան բնականօրէն մեր կոկորդներէն դուրս կը ցայտէր, շատ անգամ՝ արցունքի նուազի մը միջոցին, և որ ամէն ինչ կը կարգադրէր, ամէն ինչ կը վերջացնէր և կը լուսաւորէր ամէն ինչ: Կերդնում ձեզի թէ շատ կսկիծ ունէինք, մանկացի հելլէնուհին, գեռափթիթ Մարթ և ես, սրտերնիս թափուր զգալով այն մեծ սէրէն որ զայն ամբողջապէս լեցուցած էր երեք ամիս շարունակ: Բայց Խարիքլիա՝ բան մը մտաբերեց յանկարծ — զոր մեզի ալ ըսաւ, երեւակայեցինք Ֆէրնանը որ ամիլուած շրթներովը, բերանը նշանածին գեռաբուսիկ պեխերուն կը քսէ կոր, և այս բքանը բաւական եղաւ և ահա երկնառաք անվերջանալի քրքիչը՝ փանայեհներուն վրայ մեզ թուալեց: Այդ քրքիչը անգամ մը որ փրցուցինք, ամէն ինչ աւլեց տարաւ. յարգանք, հիացում, գորով, հանդէպ խորհողութեան ուսուցչին: Բացինք «գանձը» և պատուհանէն դուրս նետեցինք անոր պարունակութիւնը, մէջն ըլլալով այն խորհողալից մասունքը, որուն անունը ձեզ չի տուի և թերեւս չի կրցաք գուշակել: Եւ երբ վերստին գտանք մեր սրտին թեթեւ վէրքը սպիացած էր արդէն: Սկսանք Ֆէրնանը մէջտեղ դնել և զայն անողորմ խստամբերութիւնով քաշքշեցինք, իր ֆիզիքական և բարոյական ամբողջութեանը մէջ: Մեր կուռքը յամառօրէն փշուր փշուր ըրինք, բան չի մնայ որ չըսէինք, անոր մազերը շատ օծանակուած էին, հիւանդագին էր իր նիհարութիւնը, աչքերը վերջին ծայր պզտիկ էին, վրան դուլսը պէտք եղած կերպով չէր խնամեր, իր խօսելակերպը ծաղրելի էր և գրած ոտանաւորները շփոթաբանութիւններու կուսակումներ էին սոսկ: Ատեն, ատեն, Խարիքլիա մեր խօսքը կը կտրէր.

«Մա՛րթ, Իվօ՛նն, նշանախօսութեան պաշիկը»

Եւ քրքիչը պոռթկաց, անմիջապէս:

Ըսած թուականին Տիկին Պօտրմօն ամուսնացաւ Ֆէռնան Տօթրէի հետ : Վարժարանը այնուհետեւ վարեցին Տէր և Տիկին Տօթրէ-Պօտրմօնները , զիս ապահովցուցին որ դպրոցը՝ հիմա շատ բարգաւաճ վիճակ մը ունի : Չեմ գիտեր թէ Տէր և Տիկին Պօտրմօն գուշակեցին թէ փիլիսոփայութեան դասընթացքներուն հետեւով երեք լաւագոյն աշակերտուհիները ինչու այդ արձակուրդէն ետքը և ոչ ալ անկէ ոերջ , նորէն դպրոց չեկան :


Եւ ահա , մեծանուն բարեկամս , աղջկնութեանս առաջին սիրոյն պատմութիւնը :



Ա .

ԼՈՒԻՒ ՊԱՏՄՈՒԱԾՔԸ

(Թարգմանաբար Բաղուած Մարսկլ Բեկիօյի Jéminitis հասրեկն)



Ես բոլորովին վստահ եմ որ կինս զիս շատ կը սիրէ և կը խենդենայ վրաս , արդէն մեր ամուսնութիւնը փոխադարձ սիրոյ վրայ կնքուած ամուսնութիւն մը եղած է և վեց տարիներէ ի վեր որ մրտաին կը կենտկցինք մեր խանդաղաստանքը տարուէ տարի երթալով սաստկացած է :

Ապահովապէս առանց մէկզմէկու չենք կրնար ըլլալ : Սա ալ իրաւ է որ այլ ևս դադրած ենք առջի ամիսներու անառակ ճնճողուկները ըլլալէ , քով քովի տարելու շատ վարժուեցանք , տակաւին վերզգալու համար խենդութեան այն սարսուռները որ զմեզ այն ատեն կը շարժտկէին :

Բայց միշտ պէտք ունինք - որ, որ ամուսն պէտք մը

համբուրուելու, քով քոքի հանգչելու, տարասովոր գոհու-
նակութիւն մը որուն մէջ քիչ մը սիրեցեալ մօր մը համար
զաւկին զգացած մեծարանքը կայ և քիչ մըն ալ Ֆիդիքա-
կան. սէր. Այսպէս են գոնէ էլիանի համար զգացածներս և
երկեակ կեանքը զմեզ անզգալարար նոյնօրէն կաղապարած
ըլլալո՞ն, խիստ հաւանական է որ ան ալ ինծի համար միեւ-
նոյն զգացումները կը տածէ:

Եւ երբեմն կը պատահի որ, հակառակ մեր ամուսնական
կեանքին իրական երջանկութեան, լաւ մը կը կռահեմ որ՝
ան քիչ մը տխուր է, ինչպէս ես ինքս երբ միտքը կը բերէ
մեր մեղրալուսնի ճամբորդութիւնը և անոր ետեւէն եկող
ամիսները: Շատ տխուր բան է մինչև ետքը նոր ամուսնա-
ցածներ: տղաներ, խենդեր չի կրնալ ըլլալը:

* * *

Շատ մարդու հետ չենք տեսնուիր — «Nous n'allons pas
beaucoup dans le monde»: Քանի մը վաղեմի բարեկամներ
ունինք որ մեզի կուզան և որոնց հետ փոխադարձ քաղա-
քավարութեամբ կը վարուինք, մերթ ընդ մերթ ճաշկերոյթ
մը և թատրոնի օթեակ մը: Գրեթէ ամէնքն ալ ծանրաբա-
րոյ և ամուսնացած մարդեր են որ երբեք մտքերնուն չեն
անցներ կիներնին խաբել ինչպէս ես ալ մտքէս չեմ տնցներ:
Քանի մը երիտասարդներու հետ ալ կը գանուինք, բայց ա-
տոնք այնքան քիչ յանկուցիչ տիպարներ են և այնքան հե-
ռու: Տօն ժուաններ ըլլալէ որ ներսիդիէս կը խնդամ երեւա-
կայելով որ անոնցմէ մէկը կնկանս զարպաս ընելու կը փորձէ:

Իսկապէս աշխարհիկ միակ անձնաւորութիւնը, իոկա-
պէս հրամուրողը զոր քիչ մը կը ճանչնամ, իմ դպրոցական
նախկին ընկերներէս մէկն է որ նկարիչ՝ եղած է ետքէն:
Պզտիկ պզտիկ պատկերներ կը նկարէ զորս շատ սուղի կը
գնեն մանաւանդ Ամերիկացիները: Լիսէ գացած ատեննիս
մտերիմ բարեկամներ էինք իրարու, միասին ըրած էինք մեր
առաջին դպրոցականի խեղկատակութիոնները: Բայց յետոյ
մեր ապրելակերպի տարբերութիւնը բնականաբար զմեզ ի-
րարմէ հեռացուց:

Ան համարարիզեան աշխարհին (Tout-Paris) կը պատկանի թատերական առաջին ներկայացուս մը (primiere) չի փախցըներ, լրագիրներու աշխարհի ծանօթագրերու բաժնին մէջ անունը կ'երեւայ խել մը կոմսերու, մարքիզներու անուններուն առնթեր: Իպրոցէն չըջանաւարտ ըլլանէն ետքը, անգամ մը միայն առիթը ունեցայ հետը երկար բարակ խօսելու: Յետմիջօրէի մը սրահի մը մէջն էր որ հանդիպեցայ իրեն: Մեր կեանքը, մեր զբաղումները պատմեցինք իրարու: ան՝ ամուսնացած չէ, մէկ կնիկէն միւս կնկան կը վազէ, ուզածին չափ կնիկ կը գտնէ կոր, սա Ռօժէն: Ես ալ էլիանի վրայ խօսեցայ. անոր ինչ աղուոր ըլլալը հասկցուցի իրեն և թէ ինչպէս զիրար կը պաշտէինք: Ուշադրութեամբ և հաճոյքով մտիկ կ'ընէր ըսածներս և ես այդ օրը հասկցայ թէ, կեանքին մէջ զինքը ամէնէն շատ շահագրգռող բանը կինն էր, իր նկարչութենէն աւելի, դրամէն ալ, փառքէն ալ աւելի:

* * *

Մեր այս հանդիպումը էլիանին պատմեցի, անկէ ի վեր տանը մէջ ստէպ կը խօսինք Ռօժէյի վրայ: Էլիան՝ իմ հին թուղթերուս մէջ փոտուեր դտեր է լուսանկարուած իմրանկար մը, որուն մ.ջ՝ ես ու ան՝ քով քովի կեցած ենք դրպրոցականի տարազով. այդ լուսանկարը հիմա շրջանակի մէջ անցուած և մեր ննջասենեակին պատին վրայ կախուած է: Էլիան՝ շատ կը դուարձանայ երբ իրեն կը պատմեմ Քօնտօրսէ լիսէէն մէջ Ռօժէի՝ իմ մեղսակցութեամբս լրամ չարածճիութիւնները: Ստէպ կ'ընէ ինձի, անգամ մըն ալ պատմէ ինձի, տեսնենք, սա կառավարիչը ինտօր դարանի մը մէջ թխմեցիք: «Ռօժէի գծած մէկ պատկերին պատմութիւնն ալ կար գիշեր մը չարածճին՝ սեղանատան ճերմակ պատին վրայ նկարած էր միւս վերակացուն կենդանադիրը, ծունկերուն վրայ երկու մօրէ մերկ կիներ նստած, և որուն հետեւանքով, յաջորդ օրը աշակերտները՝ իրեւ պատիժ՝ դուրսի բակին մէջ ըրին իրենց նախածաշր: Էլիան խենդի պէս, կը խնդար այս յիմարապատում բաներուն վրայ:

Ռօժէ՝ անոր ուշը կը դրաւէ կոր, առաուն՝ թերթին մէջ

անոր անուանը կը փնտռէ և երբ գտնէ զայն, ինչ որ տակաւին ստէպ կը պատահի, այդ օրը մինչեւ իրիկուն, իր ուրախութիւնը չափ չունենար: Կ'երթանք կ'այցելենք անխափան այն նկարահանողները ուր Ռօժէ պատկերներ ցուցադրած կ'ըլլայ: Էլիան՝ այդ նկարները վերաբրտադրող լուսանկարները կ'առնէ և արպօնի մը մէջ կը դասաւորէ: Սաչո՛ր, ինծի այնպէս կը թուի թէ, Ռօժէ որ երբեք մեզի եկած չունի, մենէ աւելի անձնուէր և ոչ ալ աւելի հաւատարիմ հիացողներ ունի իր վրայ: Շատ անգամ, կատակի համար, Էլիանի կ'ըսեմ. «Գիտե՛ս որ պիտի սկսիմ նախանձիլ, դուն սիրահարած ես Ռօժէի»:

Ան ալ, սապէս կը պատասխանէ ինծի:

«Իրաւ որ, խենդ ես, գտնէ... զինքը ճանչնայի»...

Բայց առ ըսած ատենը, կաս կարմիր կը կտրի:

* * *

Քանի մը շարաթէ 'ի վեր Էլիան տխուր է. ինքը չի խոստովանիր սակայն. չուզեր ինծի ըսել իր տրամութեան ինչուն, երկու անգամ վրայ հասայ՝ նախարարութենէն տուն գալուս, ճիշդ այն վայրկեանին երբ ան՝ ձեռագործին վրայ գլուխը հակած կուլար: Ատեն ատեն կ'երազէ աչքերը թարթափուն, յայտնի է որ այդ վայրկեաններուն մոռցած է զիս կը ջանամ զինքը գրազեցնել, թատրոն կը տանիմ, բայց ո՛ւր որ ալ երթայ կը ձանձրանայ: Անցեալ օր հարիւրերորդ անգամ ըլլալով երբ «գարանին մէջ՝ մեր թխուած վերակացուին» պատմութիւնը կ'ընէի, մէկէն ի մէկ լայ մըն է սկսաւ և վազեց փակուեցաւ իր սենեակին մէջ:

Ան՝ իմ Էլիանս, այնքան քաղցրաբարոյ որքան հեղահամբոյր, այնքան գուարթ. ջգային, կամչոտ կին մը կ'ըլլայ կոր:

Գլուխս ճաթեցուցի գտնէ, գիտնալու համար թէ, ի՞նչ տեսակ թախիծ մը կրնար ունենալ Էլիանս, քանի որ զայն չի խոստովանիր ինծի, ըսել է թէ այդ գաղանիքը ինծի կը վերաբերի քիչ մը: Անիկա ճիշդ ու ճիշդ երեւոյթը ունի կնկան մը որ մեղադրուելիք բան մը ունի խղճին վրայ և չի կրնար էրկանը բացուիլ: Մեղադրուելիք բան... Չէ, հաւ-

տալս չի գար կոր : Իրեն դարպասող և կամ ետեւէն կայնող մը չի կայ սակայն : Երիտասարդ ոչ ոք և ոչ ալ հրապուրող մէկը ունինք մեր մտերիւններու շրջանակին մէջ : Խելքի դէմ չէ՞ այս եղածը . երկու օրէ ի վեր Ռօժէի վրայ կը մտածեմ կոր սակայն , ան է անչասկած միակ մարդը որուն վրայ էրկընէն դուրս էլիան կրնայ երազել : Բայց տեսութեամբ իսկ չի ճանչնար զայն :

Ասոր վրայ , կ'սկսիմ վիպային ենթադրութիւններ դարբնել ես ինծի , կ'երեւակայեմ որ էլիան կ'երթայ Ռօժէն կը գտնէ կոր անոր աշխատանոցին մէջ և կամ նամակով ժամադրութիւններ կուտայ կոր անոր : Նոյն ինքն Ռօժէ ինծի կը պատմէր թէ ստանկ բաներ շատ կը պատահէին իրեն : Կիներ կան . որ կ'երթան իրենք զիրենք կը մատուցանեն հռչակ հանած այրերու : Այո՛ , Ռօժէ ինծի կ'ըսէր . նաև թէ ատոնք տեսակ մը խառնակեացներ և կամ թեթեւաբարոյ աշխարհիկ կիներ կ'ըլլային : Անգամ մը սակայն պատահեր է իրեն որ՝ միջակորեար կնկան մը առաքինութեան ծաղիկը քաղէ , Բարիզէն Ռուան գացող կառաչարին մեջ : Խելօքիկ միջակորեար կին մը . . . էլիանին պէս :

* * *

Այս քստմնելի վարկածին վրայ այլ ևս երազել չեմ ուզիր : Կ'ուզեմ հանդարտ կեանքս և իմ հրբեմնի ամուսնական վստահութիւնս գտնել նորէն : էլիանի հետ բան մը չի նըշծարել կը կեղծեմ , կը ջանամ զուարթ երեւալ և իր արցունքները չի տեսնելու կը գարնեմ : Արդէն՝ կամաց կամաց ան ալ ինքզինքը կը գտնայ կոր : Գտնէ ինծի այնպէս կը թուի թէ իր թախիծը կ'այլակերպի կոր և հիմա նուազ ջղագրգուսած է աւելի մեղմացած և սուելի համակերպած : Այն յիմար գաղափարը զոր Ռօժէի մասին ունեցած էի , քիչ Քիչ խոյս տուած է ուղեղէս : Մնաց որ , լրագրական արձագանքէ մը կ'իմանամ թէ՛ Ռօժէ՛ սեթր օրէ ի վեր Բարիզ չի գտնուիր :

* * *


Այս առտու , քունէն արթնցածին պէս , էլիան՝ թեւերը վզիս փաթթեց և ըսաւ :

— Ինձի նայէ՛ Լուի, շատ ծանրակշիռ բան մը ունիմ քեզի ըսելիք :

Այդ վայրկեանին ինձի սնանկ եկաւ որ, իմ ընտանեկան խեղճ երջանկութիւնս էր ոոր պիտի փլչէր, թէ այլ ևս միս մինակս պիտի մնացի անսպասի մը մէջ սրափուռն . . . :

Կամացուկ մը, մեղմօրէն ձեռքովս դոցեցի ի երանք և ըսի իրեն :

— Ա՛խ, ստքդ պագնեմ, ըսելիքդ քեզի պահէ, բան մի՞ ըսեր ինձի :



ԿԻՆՈՒ ԵՒ ՀԱՅԵԼԻՆ

(Յիշատակներու ընդ մեջեմ)

Թուականը մի՞ հարցնէք ինձի, մինակ թոյլ տուէք որ եղածը անկեղծօրէն և տեղն ի տեղսքը պատմեմ ձեզի : Եւ արդէն, տեղը և ժամանակը ճշդիլ գրելիքիս հրապօրին վրայ բան մը չաւելցնելը :

* * *

Ատենօք բարեկամ մը ունէի որ շատ կ'ախորժեր գրչիս արտադրութիւններէն և զիս տուելը կը հրաւիրէր ստէպ որպէս զի թուղթի կտորի մը վրայ ձեռքովս բան մը գրեմ, զորս ետէն հաւաքելով իր աշխատութեան սենեակին մէկ պատը ամբողջովին ծածկեց անոնցմով :

Օր մը, երբ զիս շատ ստիփեց ձեռագրովս բան մը ունենալու, լաւադոյն բան մը չունենալով գրելիք, սա հարց պատասխանին գրեցի և մէկ կողմ ելայ :

Ահաւասիկ թէ ի՞նչ էր գրածս :

— Ի՞նչ սարքերուքիւն կայ կնկան մը եւ հայելիի միջեւ :

— Հայելիին մեծը յարգի է և կնկան պղտիկը :

*

Մէկ կամ երկու շաբաթ ետքն էր որ նոյն բարեկամս իմ գրածս ցոյց տուաւ ինձի, որուն տակ մեր բարեկամներէն բանաստեղծ մը աւելցուցած էր :

— Հայելիին եւ կնկան միջեւ գտնուած սարքերուքիւնը կ'ուզես: Ահաւա՛սիկ :

— Երբ հայելիին կը նայիս, դու գտնու կը գտնես իսկ երբ կնկան կը նայիս, կը կորսնցնես ինքզինքդ :

* * *

Տեսայ որ ասոր վերջը գալիք շունէր և հետզհետէ այլանդակ և անպատկառ բաներ պիտի գրէինք, գացի իրիկուն մը վինքը դտայ Թօքաթլեանին և ըսի,

— Ճարեկամ, ալ կը ըսէ, վերջացունենք այս խայտառակ կատակերգութիւնը, թող մրցանակը դուն շահած ըլլաս, ես ասոր աչք շունիմ: Սկսէր, վերջակէտը դնենք, համաձայնօրէն :

— Ինչպէ՞ս կրնանք ստիկա ընել, կը հարցնէ ինձի .

— Ոչինչ կայ ասկէ աւելի դիւրին .

Ինչպէ՞ս ընենք, ըսէ՛ տեսնեմ :

— Հոյելի մը երբ գտնես, դուն ա՛ս, իսկ երբ գտածդ կնիկ մըն է, ինձի տուր :

Ասոր վրայ, գաւաթ մը ես դ'արեջուր խմեցինք և բաժնուեցանք իրարմէ և անկէ ի վեր վերար բնաւ տեսած չունինք: Փառք յուրիտեանս, ամէն :



ՀԵՂԻՆԱԿԻՆ ԵՐԿԱՍԻՐՈՒՅԻՒՆՆԵՐԸ

Որքան սեւեյու է

Ֆանթազիկո

Շոգ — Մոգ

Առաջին անգամը

Սպառած

20 Ղրու

Սպառած

»

Ասոնց պիտի յաջորդեն՝ երկու գլուխ-գործոցներու թարգ-
մութիւնները .

Կ. ՖԼՕՊԷՌԻ՝ Տիկին Պովարի

Ն. ՄԻԻՐԺԷ՝ Դրուագներ Պօհեմի կեանքի

